Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
հուլիսի 21-ի N 1133 - Լ որոշման

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԲԱԺԻՆ Ի. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 9

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ 9

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՈՒՄ՝ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՄԲ 21

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 26

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ.....30

ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.....40

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 44

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.....49

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 56

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 59

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.....65

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 70

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՅԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 75

ԲԱԺԻՆ II: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....79

ԲԱԺԻՆ III: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 87

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են դատական և իրավական բարեփոխումներ՝ առավելապես պայմանավորված լինելով 1995թ. Սահմանադրության ընդունմամբ և Սահմանադրության հետագա փոփոխություններով: 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո իրականացվել է առաջին դատաիրավական բարեփոխումը, որի նպատակն էր գործող խորհրդային դատական համակարգը փոխարինել նորանկախ Հայաստանի ինքնուրույն դատական համակարգով, ստեղծել անկախ հանրապետության սեփական օրենսդրություն, դատական և իրավապահ մարմիններ:

2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո ընդունվել են դատական և իրավական բարեփոխումների երկու ռազմավարություններ. առաջինն ընդգրկել է 2009-2011 թվականները, երկրորդը՝ 2012-2016 թվականները (այս ծրագրի ժամկետը երկարաձգվել է մեկ տարով՝ մինչ 2017 թվականի ավարտը)[1]:

Վերոնշյալ երկու ծրագրերում ընդգծվել է արդյունավետ դատական իշխանության կայացումը, անկախ և հանրության վստահությունը վայելող դատական համակարգի ձևավորումը[2]: Նախորդ ռազմավարության շրջանակներում իրականացվել են որոշ դրական փոփոխություններ, որոնցից կարելի է մատնանշել դատավարության ոլորտին առնչվող որոշ հիմնարար օրենսգրքերի ընդունման հանգամանքը, մասնավորապես՝ Վարչական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 05.12.2013 թվականին), «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (ընդունվել է 07.02.2018 թվականին), Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը (ընդունվել է 09.02.2018 թվականին):

2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները օրակարգ բերեցին իրապես անկախ, արդյունավետ, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական իշխանություն ունենալու բացարձակ առաջնահերթությունը: Այս առաջնահերթությունը ընդգծվեց Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. ծրագրում, որի առաջնահերթությունների հիման վրա մշակվեց և 2019 թվականի հոկտեմբերի 10-ին

---

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50926, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID-=110851:

[2] Ծրագրերի վերլուծությունն առավել մանրամասն տե՛ս «Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության անկախության հաստատման վրա», հասանելի է հետևյալ հղումով՝ http://prwb.am/new/hy/2019/01/25/%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5-%A1%D5%B6-%D6%87-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A2/

ընդունվեց Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունը, որով մատնանշվեցին բարեփոխումների 18 ռազմավարական նպատակներ՝ համապատասխան ուղղություններով: Ռազմավարական նպատակները ներառում էին հետևյալը՝ էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում, անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում, սահմանադրական բարեփոխումների անցկացում, ընտրական օրենսդրության բարեփոխում, դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ, դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ստեղծում, իրավապահ համակարգի բարեփոխում, քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում, վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում, սնանկության ոլորտի բարեփոխումներ, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում, նոտարական համակարգի արդյունավետության բարձրացում, փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացում, հարկադիր կատարման համակարգի բարեփոխումներ: Ռազմավարության հիման վրա կազմվեցին ռազմավարությունից բխող կարճաժամկետ (2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2020 թվական), երկարաժամկետ (2021 թվականից մինչև 2023 թվականը) և էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման վերաբերյալ առանձին գործողությունների ծրագրեր (2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2023 թվականը):

Ռազմավարությամբ նախատեսված գործողությունների իրականացման վրա էական բացասական ազդեցություն ունեցան կորոնավիրուսային հիվանդության հետևանքով արտակարգ դրության, ապա նաև՝ կարանտինի հայտարարումը և սահմանափակումների կիրառումը, ապա նաև՝ 2020թ. 44-օրյա պատերազմը և դրա հետևանքով պետական ինստիտուտների բնականոն գործունեության խափանումը և տարբեր շահագրգիռ կառույցների միջև համագործակցության անհնարինությունը:

Այս համատեքստում 2022 թվականի փետրվարի դրությամբ Հայաստանի Հանրապետությաան դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարության հավելվածով հաստատված 94 գործողություններից մասամբ կամ ամբողջությամբ կատարվել է ընդհանուր 70 գործողություն: Կատարված

գործողությունների արդյունքում ընդունվել են Քրեական և Քրեական դատավարության նոր օրենսգրքերը, սահմանվել են դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ չափանիշները, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը համապատասխանեցվել են կոռուպցիայի դեմ պայքարի նպատակներին, Վճռաբեկ դատարանում ստեղծվել են նոր՝ վարչական և հակակոռուպցիոն պալատներ, ներդրվել է առանձին մասնագիտացված դատավորների կողմից մինչդատական քրեական վարույթի գործերը քննելու ինստիտուտ, վերանայվել է ընտրական օրենսդրությունը, մեծածավալ աշխատանքներ են նախաձեռնվել սնանկության, հարկադիր կատարման ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ և այլն:

Իրականացված բարեփոխումների արդյունքները անդրադարձ են ստացել մի շարք միջազգային կազմակերպությունների զեկույցներում՝ կարևորելով շարունակական բարեփոխումների անհրաժեշտությունը: Օրինակ, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի հրապարակած «Կոռուպցիայի ընկալման ինդեքս 2021թ.» զեկույցի համաձայն՝ Հայաստանին, ինչպես և նախորդ տարի տրվել է 49 միավոր: Արդյունքում, Հայաստանն առաջընթաց է ապահովել և 180 երկրների շարքում 58-րդն է, նախորդ տարվա՝ 60-րդ հորիզոնականի և 2019 թվականի 77-րդ հորիզոնականի փոխարեն: Հայաստանն ընդգրկվել է այն 25 երկրների շարքում, որոնք վերջին տասնամյակում կոռուպցիայի ընկալման համաթվի էական բարելավում են արձանագրել: Բարեփոխումները նպաստել են նաև Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանը, ինչ մասին է խոսում նաև այն փաստը, որ Հայաստանը առաջատար է «Արևելյան գործընկերության համաթիվ 2020-2021 «Ժողովրդավարություն լավ կառավարում» բաժնում (0.73 միավոր): Այստեղ Հայաստանը եղել է առաջատարը հետևյալ ցուցիչներով՝ «ժողովրդավարական իրավունքներ, ընտրություններ և քաղաքական բազմակարծություն» (0.84 միավոր), «Ազատ մամուլ» (0.67 միավոր), «Կարծիքի և արտահայտման ազատություն, հավաքների և միավորումների ազատություն» (0.84 միավոր), «Կոռուպցիայի դեմ պայքար» (0.88 միավոր) և «Անկախ դատական իշխանություն» (0.71 միավոր):

Չնայած դրան, մի շարք զեկույցներում արձանագրվել են նաև դատահիրավական ոլորտում առկա շարունակական խնդիրները: Օրինակ, «Freedom House» հասարակական կազմակերպության «Ազատությունն աշխարհում» զեկույցում[3] նշվել է, որ անկախ դատական համակարգի ցուցանիշը 2019-2021 թվականների ընթացքում առավելագույն 4 միավորից ամեն տարի գնահատվել է 1 միավոր, իսկ արդարացի

[3] Freedom house "Freedom in the world" reports, https://freedomhouse.org/report/freedom-world/2022/global-expansion-authoritarian-rule

ընտրական օրենքների առկայության ցուցանիշը նույն ժամանակահատվածի համար առավելագույն 4 միավորից ամեն տարի գնահատվել է 2 միավոր: Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) Հարցումների հետազոտության կենտրոնի նախաձեռնությամբ 2021 թվականի դեկտեմբերին իրականացված հարցման[4] արդյունքում հարցվածների միայն 8%-ն է լիովին բավարարված եղել դատարանների աշխատանքով, ինչը փաստում է, որ դատական համակարգը շարունակում է մնալ պետական ինստիտուտներից ամենաքիչ վստահելին:

Այսպիսով, դեռևս անհրաժեշտ են մի շարք գործողություններ, ուղղված դատական համակարգի անկախության, անկողմնակալության և դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը, հանրային ծառայությունների մատուցման որակի բարելավմանը, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարելավմանը, էլեկտրոնային արդարադատության միասնական կառավարման համակարգի ներդրմանը և այլ քայլեր, որոնք էապես անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության դատաիրավական համակարգի զարգացման համար:

Ամեն դեպքում, 2021թ. հունիսի 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններն ի ցույց դրեցին ժողովրդավարական գործընթացների անշրջելիությունը Հայաստանի Հանրապետությունում: Դրանք արդեն երկրորդ անընդմեջ համապետական ընտրություններն էին, որ միջազգային հանրության կողմից արժանացան բարձր գնահատականի: Ընտրությունների արդյունքում Կառավարությունը ներկայացրեց իր նոր՝ 2021-2026թթ. գործունեության ծրագիրը, որի հիման վրա 2021 թվականի նոյեմբերի 18-ին ընդունվեց Կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը:

Կառավարության ծրագրով և դրանից բխող միջոցառումների ծրագրով նախատեսվեցին նոր Կառավարության առաջնահերթությունները նաև արդարադատության, այդ թվում՝ դատաիրավական ոլորտում, ինչը ենթադրում էր նաև դատական-իրավական բարեփոխումների ռազմավարության վերանայումը՝ Կառավարության նոր ծրագրի լույսի ներքո: Արդյունքում, միջոցառումների ծրագրով որպես միջոցառում նախատեսվեց դատաիրավական բարեփոխումների ռազմավարության վերանայումը՝ կարևորելով ընտրական, էլեկտրոնային արդարադատության, փաստաբանության ոլորտների, ինչպես նաև վեճերի լուծման այլընտրանքային եղանակների ու մասնագիտացված դատարանների և դատավորների ենթամասնագիտացումների շարունակական զարգացման,

[4] Center for insights in survey research «Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն», https://www.iri.org/wp-content/uploads/2022/02/Final-presentation_Arm.pdf

սնանկության մասին օրենսդրության բարեփոխումների իրականացման, պետական և համայնքային ծառայությունների մատուցման՝ ներառյալ ՔԿԱԳ ոլորտի ծառայությունների մատուցման բարելավման և սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի մշակման ուղղությունները:

Վերոնշյալը հաշվի առնելով, ինչպես նաև հիմք ընդունելով Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը՝ մշակվել է դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարությունը՝ որպես վերանայում 2019-2023թթ. ռազմավարության:

Ռազմավարությամբ նախատեսվել են թվով 12 ռազմավարական նպատակներ և 41 ռազմավարական ուղղություններ՝ էլեկտրոնային արդարադատության, անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման, ժողովրդավարական ինստիտուտների (մասնավորապես՝ սահմանադրական, ընտրական) և դատական համակարգի բարեփոխումների, քրեաիրավական, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության, վարչական և վարչական դատավարության, սնանկության, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների, փաստաբանության, հարկադիր կատարման, նոտարիատի և արդարադատության համակարգի ընդհանուր զարգացման այլ ոլորտներում:

Ռազմավարությունը բաղկացած է դրա մասը կազմող գործողությունների ծրագրից, որով առանձնացված են յուրաքանչյուր ռազմավարական նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ գործողությունները, ինչպես նաև յուրաքանչյուր ռազմավարական նպատակի վերջնական, միջանկյալ և ուղղակի արդյունքները: Յուրաքանչյուր նպատակի վերջնական արդյունքն արտահայտում է նպատակի ընդհանրական արդյունքները ոլորտային և բնագավառի մակարդակով: Միջանկյալ արդյունքներն անմիջականորեն բխում են ռազմավարական նպատակի համապատասխան վերջնական արդյունքներից, որոնք արտահայտում են արդյունքներ ենթաոլորտի և կոնկրետ երևույթի մակարդակով և նպաստում են վերջնական արդյունքների իրագործմանը: Ուղղակի արդյունքներն անմիջականորեն բխում են ռազմավարական նպատակի միջանկյալ արդյունքներից, որոնք արտահայտում են յուրաքանչյուր ռազմավարական նպատակի՝ որակական կամ քանակական ցուցանիշներով արտահայտված արագ արդյունքներն առավել ցածր մակարդակում և նպաստում են միջանկյալ արդյունքների իրագործմանը:

Յուրաքանչյուր նպատակի յուրաքանչյուր գործողության համար ներկայացվում են գործողության համառոտ նկարագրությունը, դրա կարևորությունը, գործողության կատարման ստուգման միջոցը և դրա վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աղբյուրը, գործողության համար պատասխանատու մարմինները, ինչպես նաև գործողության ֆինանսավորման աղբյուրը և չափը:

Յուրաքանչյուր գործողություն ունի նաև որոշակի ժամանակահատվածում գործողության նպատակային մակարդակն արտահայտող թիրախային ցուցանիշներ, որին պետք է հասնել գործողության կատարման արդյունքում, ինչպես նաև բազային ցուցանիշներ, որոնք նկարագրում են գործողության այն ելակետային դրությունը, որի նկատմամբ սահմանվել են թիրախային ցուցանիշները, և որի նկատմամբ հետագայում գնահատվելու է տվյալ գործողության իրագործման մակարդակը: Ռազմավարությունը կազմվել է Վարչապետի՝ 2021 թվականի դեկտեմբերի 30-ի «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգը հաստատելու մասին» թիվ 1508-Լ որոշմամբ հաստատված՝ պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին համապատասխան:

Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի ֆինանսական կայունությունն ապահովվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հասանելի միջոցների շրջանակում ռազմավարական նպատակներից բխող գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրման միջոցով, որոնք հնարա-վորության սահմանում հաշվարկվել և արտացոլվել են գործողությունների ծրագրում:

Գործողությունների արդյունավետ իրականացման տեսանկյունից կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում դատահիրավական բարեփոխումներին մշտապես աջակցող գործընկերների, այդ թվում՝ Եվրոպական միության բյուջետային աջակցության շրջանակներում տրամադրվող ֆինանսական աջակցությունը: Այս համատեքստում հարկ է նշել, որ Արդարադատության նախարարությունը նախատեսում է ստեղծել և համակարգել միջազգային գործընկերների համակարգման հարթակ՝ նրանց աջակցությունը համակարգելու, ինչպես նաև գործողությունների ամբողջականությունը, արդյունավետությունն ու փոխլրացումն ապահովելու նպատակով:

Միևնույն ժամանակ, Արդարադատության նախարարությունը նաև ապահովելու է սույն ռազմավարության և այլ ռազմավարական փաստաթղթերի, այդ թվում՝ հակակոռուպցիոն, քրեակատարողական և պրոբացիայի, մարդու իրավունքների ազգային պաշտպանության ռազմավարությունների միջև գործողությունների համակարգումը, վերջիններիս՝ միմյանց փոխլրացումն ու փոխգործակցությունը տարբեր պատասխանատու գերատեսչությունների միջև:

ԲԱԺԻՆ Ի. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Պայմանավորված հասարակական հարաբերությունների առաջընթացով, դրանց շրջանակում թվային տեխնոլոգիաների ներդրմամբ և լայնորեն կիրառմամբ՝ օբյեկտիվորեն առաջ է գալիս նաև այդպիսի տեխնոլոգիաների և դրանցով պայմանավորված լուծումների օգտագործման անհրաժեշտություն հանրային կառավարման, այդ թվում՝ արդարադատության իրականացման համակարգի շրջանակներում: Մասնավորապես, վերջին տարիներին մի շարք քայլեր են ձեռնարկվել հանրային կառավարման տարբեր էլեկտրոնային հարթակների ներդրման ուղղությամբ: Սակայն նման միտումը պետք է շարունակական և պարբերական բնույթ կրի՝ հաշվի առնելով ինչպես հիմք հանդիսացող հարաբերությունների զարգացումը, այնպես էլ դեռևս այնպիսի ոլորտների առկայությունը, որտեղ չնայած առկա կարիքին՝ համապատասխան էլեկտրոնային կառուցակարգերը չեն ներդրվել:

Մասնավորապես, էլեկտրոնային համակարգերի ներդրման համատեքստում, հատկապես, արդարադատության ոլորտում կատարվել են մի շարք փոփոխություններ, ինչպես օրինակ՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը (www.e-draft.am), էլեկտրոնային դատավարության որոշ մոդուլներ, օրինակ, վճարման կարգադրություններ արձակելու համար դիմելու կառուցակարգերը: Այնուամենայնիվ, դեռևս շատ անելիքներ կան հանրային կառավարման էլեկտրոնային գործիքների բարելավման, նոր գործիքների ներդրման և դրանց միջոցով վարչարարության պարզեցման և ժամանակի խնայման ուղղությամբ:

Ընդ որում, կարևոր է նաև նոր ներդրվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության երաշխիքների նախատեսումը: Ուստի, այս համատեքստում իրականացվող միջոցառումների կապակցությամբ, անվտանգային նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է դրանց կատարումը համաձայնեցնել նաև ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգերի ստեղծում

Թվային դարաշրջանում առկա էլեկտրոնային համակարգերը արդարադատության ոլորտի համար առաջացնում են նոր մարտահրավերներ և հնարավորություններ: Ներկայումս արդարադատության ոլորտի մի շարք մարմիններ ունեն արդեն իսկ ներդրած էլեկտրոնային համակարգեր, սակայն այդ համակարգերը փոխգործելի չեն արդարադատության ոլորտի այլ մարմինների էլեկտրոնային համակարգերի հետ: Ներկայումս անհրաժեշտ է ներդնել կենտրոնացված էլեկտրոնային կառավարման համակարգ արդարադատության ոլորտի խնդիրների համապարփակ լուծման նպատակով: Ընդ որում, նշված համակարգի ստեղծումը պետք է իրականացվի ինչպես արդարադատության մարմիններում ներկայումս գործող համակարգերի արդիականացման, այնպես էլ նոր համակարգերի ստեղծման և դրանց համակցման միջոցով:

«Էլեկտրոնային արդարադատություն» միասնական համակարգի ներդրման նպատակերն են՝

ա) ստեղծել դատական, իրավապահ (հետաքննության և նախաքննության մարմիններ, դատախազություն) և իրավակիրառ մարմինների (Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, Քրեակատարողական ծառայություն, Պրոբացիայի ծառայություն) և այլ մարմինների, կազմակերպությունների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ,

բ) արդիականացնել դատարանների և արդարադատության ոլորտի այլ մարմինների գործող էլեկտրոնային կառավարման համակարգերը,

դ) ստեղծել և ներդնել դատական միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ, որը կապահովի գործերի մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան և միևնույն ատյանի դատարանի նստավայրերի միջև փոխանցումը, ինչպես նաև կողմ-կողմ, կողմ-դատարան ծանուցման արդյունավետ համակարգի գործարկումը, որի արդյունքում հնարավոր կդառնա դատարան ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ և դատավարական այլ գործողություններ կատարելն էլեկտրոնային եղանակով,

ե) ստեղծել էլեկտրոնային հարթակ՝ ապահովելով պաշտոնական առցանց նամակագրությունը, էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների միջև, ինչպես նաև՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հնարավորություն ստեղծելով առցանց կապ հաստատել, դիմում, բողոք և այլ փաստաթղթեր ներկայացնել պետական մարմիններին, բացի այդ ընձեռել գործի ընթացքին առցանց հետևելու հնարավորություն,

զ) ապահովել համակարգի միջոցով վիճակագրական տվյալների հավաքագրումը վարույթի ողջ ընթացքում,

է) միավորել արդարադատության մարմիններում գործող բոլոր էլեկտրոնային համակարգերը և տվյալների շտեմարանները,

ը) ապահովել թվային արխիվների ստեղծումը:

Վերոնշյալ գործընթացների իրականացման արդյունքում էլեկտրոնային միասնական համակարգը կապահովի էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառության իրականացումը, կնպաստի արդարադատության ոլորտի մարմիններում գործող համակարգերի վարման միասնական քաղաքականության մշակմանը, վիճակագրական համապարփակ տվյալների հավաքագրմանը, ժամանակի, նյութական ռեսուրսների խնայողությանը և վարչարարության պարզեցմանը:

Անդրադառնալով «Էլեկտրոնային արդարադատություն» համակարգի առանցքային մաս կազմող «Էլեկտրոնային դատարան» համակարգին՝ պետք է նշել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության դատական համակարգը չունի միասնական էլեկտրոնային համակարգ, որի շրջանակներում իրականացվեն բոլոր դատական վարույթները:

Առկա են մի քանի առանձին էլեկտրոնային գործիքներ, որոնք չեն կարող ապահովել դատավարության ամբողջ թվայնացումը, ինչի պայմաններում չի կարող արդյունավետ ներդրվել և գործել «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգը:

Այս պահին «Էլեկտրոնային դատարան» կառավարման միասնական համակարգի մշակումն ու ներդրումը հանդիսանում են առաջնային անհրաժեշտություն, ինչի իրագործումը հնարավորություն կընձեռի դատարանին և կողմերին վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթները և դատավարական գործողությունները իրականացնել էլեկտրոնային եղանակով:

Նախատեսվում է, որ համակարգը իր մեջ կպարունակի քաղաքացիական, վարչական, սնանկության և քրեական դատական գործերով էլեկտրոնային գործիքակազմը, յուրաքանչյուրն առանձին մոդուլով՝ համակցված այն բոլոր մարմինների և կազմակերպությունների էլեկտրոնային տվյալների շտեմարաններին, որոնք ներգրավված են դատավարության մեջ կամ հանդիսանում են դատարանի համար անհրաժեշտ տեղեկատվության մշակողներ/տնօրինողներ կամ ստացողներ:

Անդրադառնալով դատական գործերի էլեկտրոնային մակագրության, բաշխման և դատական ակտերի պաշտոնական հրապարակման տեղեկատվական համակարգերին՝ հարկ է ընդգծել, որ գործող կարգի պայմաններում գործերի բաշխման կարգը հաշվի չի առնում դատավորի ծանրաբեռնվածությունը և գործի

բարդությունը, ինչը հանգեցնում է որոշ դատավորների անհամաչափ ծանրաբեռնվածության:

Ներկայումս արդիական խնդիր է գործերի բաշխումն ըստ ոլորտային մասնագիտացման՝ հատկապես քաղաքացիաիրավական մասնագիտացման դատավորների միջև: Այժմ գործող ընդհանուր բաշխման մոդելը չի ապահովում գործերի արդյունավետ քննություն: Ուստի հիմնարար բարեփոխման կարիք ունեն դատական գործերի էլեկտրոնային մակագրության և գործերի բաշխման կարգերը:

Դրանից զատ, անհրաժեշտ է կատարելագործել նաև դատական ակտերի պաշտոնական հրապարակման տեղեկատվական համակարգը, ընդլայնել դրա տեխնիկական հնարավորությունները:

Անհրաժեշտ է նաև մշակել և ներդնել հաշտարարության ինստիտուտի էլեկտրոնային կառավարման միասնական ռեեստր: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում այս պահին առկա չէ հաշտարարների միասնական էլեկտրոնային ռեեստր, որը հնարավորություն կընձեռներ Արդարադատության նախարարությանը վարել և հրապարակել գործող բոլոր հաշտարարների վերաբերյալ տվյալները, նրանց կարգավիճակը, մասնագիտացումը և այլ անհրաժեշտ տվյալները, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով իրականացնել հաշտարարների թեկնածուների ընտրությունը: Նշվածի անհրաժեշտությունը բխում է հատկապես դատաիրավական բարեփոխումների շրջանակներում առցանց և պարտադիր հաշտարարության ինստիտուտների նախատեսվող ներդրմամբ, նոր հաշտարարների որակավորմամբ և նրանց ռեեստրում հաշվառմամբ, ինչի արդյունքում ծագելու է համապատասխան էլեկտրոնային գործիքակազմ ներդնելու անհրաժեշտություն: Էլեկտրոնային ռեեստրի ներդնումը ոչ միայն հնարավորություն կընձեռի վարել միասնական շտեմարան, այլ նաև հաշվի առնելով հաշտարարների մասնագիտացումը և ծանրաբեռնվածությունը, վիճակահանության ձևաչափով ընտրել հաշտարարի թեկնածուին: Անհրաժեշտ է նաև ապահովել, որ յուրաքանչյուր հաշվառված հաշտարար ունենա իր անձնական կաբինետը՝ իր ծանրաբեռնվածությունը կառավարելու և ռեեստրի ճկուն գործիքներից օգտվելու համար:

Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է իրականացնել նաև նոր ծրագրային ապահովման կիրառման գործընթացում ներգրավված անձանց վերապատրաստումներ:

Նշվածին զուգահեռ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ներկայումս դատական համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը և վիճակագրությունն ունեն սահմանափակ հասանելիություն: Վիճակագրական տվյալները հասանելի են www.court.am կայքում, սակայն կայքի տեղեկատվական բազան ժամանակին չի թարմացվում, իսկ վիճակագրական տեղեկատվությունը ինքնաշխատ չի գեներացվում և ամփոփված չէ օգտագործողի համար հարմար ձևաչափով: Մինչդեռ, դատական

համակարգի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության տեսանկյունից էական նշանակություն ունի հանրության համար հասանելի, առցանց ռեժիմում գործող, դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակումը: Ուստի, անհրաժեշտ է ապահովել դատական համակարգի գործունեության վերաբերյալ ամբողջական հաշվետվությունների և վիճակագրության հանրային հասանելիությունը, ինչը կբարձրացնի դատական իշխանության հանրային հաշվետվողականությունը:

Արդարադատության ոլորտի մարմինների էլեկտրոնային համակարգերի լրամշակում

«Էլեկտրոնային արդարադատություն» և «Էլեկտրոնային դատարան» էլեկտրոնային համակարգերի ներդրմանը զուգահեռ հարկ է անդրադարձ կատարել և արդիականացնել նաև արդարադատության ոլորտին առնչակից մի շարք համակարգեր, որոնց համալիր գործունեության արդյունքում է միայն հնարավոր երաշխավորել սույն Ռազմավարությամբ որդեգրված՝ էլեկտրոնային արդարադատության հեռահար տեսլականի ապահովումը:

2020 *Ներդնել և գործարկել e-probation էլեկտրոնային կառավարման համակարգը, ինչպես նաև արդիականացնել e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը*

Նորարարական տեխնոլոգիաների զարգացման միտումներին համահունչ՝ անհրաժեշտ է Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, փաստաթղթաշրջանառությունը կրճատելու, արդյունավետ, թափանցիկ և հաշվետու կառավարում ապահովելու նպատակով ծառայություններում ներդնել և արդիականացնել e-probation և e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգերը, ընդ որում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չնայած այն փաստին, որ «e-penitentiary» էլեկտրոնային կառավարման համակարգը ներկայումս գործում է, սակայն, այն ունի արդիականացման կարիք, քանի որ ծրագրային հենքը մշակվել է շուրջ 6 տարի առաջ և չի բավարարում ժամանակակից պահանջմունքներին:

Էլեկտրոնային կառավարման համակարգերը հնարավորություն կտան թվայնացնել կալանավորված անձանց, դատապարտյալների և պրոբացիայի շահառուների հետ տարվող ցանկացած աշխատանքի արդյունքները: Համակարգերը հնարավորություն կտան կալանավորված անձանց և դատապարտյալների առնչությամբ օրենսդրությամբ կիրառվող բոլոր գործառույթներն իրականացնել, անհրաժեշտ փաստաթղթերի, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի կրման ռեժիմների փոփոխման, տեսակցությունների, ուսման,

աշխատանքի վերաբերյալ, ինչպես նաև կարևորություն ներկայացնող այլ տեղեկությունները ստանալ էլեկտրոնային եղանակով: Ընդ որում՝ լուսանկարելու, մատնահետքեր վերցնելու, ինչպես նաև տեսանկարելու ողջ գործընթացն իրականացվելու է թվայնացված եղանակով՝ արխիվացվելով յուրաքանչյուր անձի անվանական թղթապանակում: Ավտոմատացված համալիրի առավելություններից է նաև ցանկացած ձևաչափով հաշվետվություններ ստանալու, վերլուծական աշխատանքներ իրականացնելու հնարավորության առկայությունը:

2. Ներդնել և գործարկել e-criminal case (քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգ) էլեկտրոնային կառավարման համակարգը

Ներկայումս առկա չէ քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն կընձեռի վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթաշրջանառությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով: Այս պահին քրեական գործերի նախաքննություն իրականացնելու դատավարական գործընթացում անմիջականորեն ներգրավված օղակներում ուրվագծվում են մի շարք խնդիրներ՝ մեծ ծավալով թղթային փաստաթղթաշրջանառություն, գրենական պարագաների մեծ ծախս, ծանուցումների համակարգի անկատարություն, էլեկտրոնային աջակցող համակարգերի բացակայություն և այլն: Քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի (ՔԳՄՎԷԿՀ) գործողությունն իրենից ենթադրում է տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, ինչի արդյունքում վերը նշված խնդիրների լուծմանը զուգահեռ էականորեն կբարելավվի քրեական գործերի մինչդատական վարույթի գործընթացների արդյունավետությունը, կխնայվեն ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, կնվազեցվի քրեական գործերի քննության ընթացքում սխալների, թերությունների, բացթողումների հնարավորությունը, կդյուրացվի քրեական գործերի քննության ընթացքում ապացույցների ձեռքբերումը և այլն:

3. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում և գործարկում

Կատարողական գործողությունների կատարման ժամկետների կրճատման և ընդհանրապես կատարողական վարույթի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է ժամանակակից տեխնիկական լուծումների կիրառումը: Մասնավորապես, անհրաժեշտ է կատարելագործել կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքների կիրառման և էլեկտրոնային ծանուցումների մեխանիզմները: Բացի այդ, վարչարարության արդյունավետությունն ապահովելու համար պետք է զարգացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական բոլոր մարմինների և շահագրգիռ անձանց միջև էլեկտրոնային

փաստաթղթաշրջանառության համակարգը, ընդլայնել կատարողական վարույթի մասնակիցների՝ հարկադիր կատարողի հետ էլեկտրոնային եղանակով հաղորդակցություն իրականացնելու հնարավորությունը, ապահովել կատարողական վարույթի շրջանակում կայացված որոշումներն էլեկտրոնային եղանակով ստանալու, բողոքարկելու, դիմումներ, բողոքներ, փաստաթղթեր ներկայացնելու, դրանց պատասխաններն էլեկտրոնային միասնական համակարգի միջոցով ստանալու օրենսդրական հիմքերի ամրագրումը և դրանց գործնականում կենսագործումը: Անհրաժեշտ է ապահովել կատարողական վարույթի կողմերի մասնակցությամբ փաստաթղթաշրջանառության իրականացումը մեծապես կատարողական վարույթների անձնական էլեկտրոնային գրասենյակի միջոցով, ընդլայնել անձնական գրասենյակի օգտատերերի շրջանակը՝ արդյունքում նվազեցնելով նաև կատարողական վարույթի մասնակիցների և հարկադիր կատարողի անմիջական շփման անհրաժեշտությունը և զսպելով դրանից բխող ռիսկերը:

Անհրաժեշտ է ապահովել նաև կատարողական վարույթի շրջանակում մի շարք գործողությունների կատարումն ինքնաշխատ եղանակով՝ առավելագույնս բացառելով այդ գործընթացում մարդկային միջամտությունը, ինչն իր հերթին հնարավորություն կտա կրճատել կատարողական վարույթների տևողությունը, կատարողական վարույթի շրջանակում ծախսվող ֆինանսական ռեսուրսները, կատարողական վարույթի ընթացքում մարդկային գործոնով պայմանավորված բացթողումները և զսպել այլ հնարավոր ռիսկերը: Բացի այդ, դրամական պահանջներով կատարողական թերթերի կատարման շրջանակներում բռնագանձման ենթակա գումարների հաշվարկման ճշգրտությունն ապահովելու համար անհրաժեշտ է ներդնել դրամական պարտավորության նկատմամբ հաշվարկվող բոլոր տոկոսների և այլ վճարների ավտոմատ հաշվարկման էլեկտրոնային գործիքներ՝ դրանով իսկ բացառելով պահանջատիրոջ (մասնավորապես՝ բանկի և այլ ֆինանսական կազմակերպության) կողմից ներկայացվող հաշվարկների հիման վրա բռնագանձման ենթակա գումարի վերջնական չափի հաշվարկումը:

Անհրաժեշտ է ապահովել նաև կատարողական վարույթները հարկադիր կատարողների միջև բաշխելու իրականացումն ինքնաշխատ եղանակով, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործող համակարգերի արդիականացումը և նոր էլեկտրոնային կապուղիների ներդրումը, բռնագանձված գումարները բաշխելու և կատարողական վարույթը կարճելու գործընթացի առավելագույն ավտոմատացումը և օպտիմալացումը:

Միաժամանակ, անհրաժեշտ է ապահովել հարկադիր էլեկտրոնային աճուրդների էլեկտրոնային համակարգի արդիականացումը և Հարկադիր կատարումն ապահովող

ծառայության նոր էլեկտրոնային համակարգի հետ դրա համակցումը, ինչպես նաև նվազեցնել վարույթի մասնակիցների անձնական տվյալների և ծառայության թվային շտեմարանի հնարավոր կորստի և/կամ արտահոսքի ռիսկերը:

Արդարադատության նախարարության ոլորտներին վերապահված հանրային գործառույթների և տվյալների բազաների թվայնացում կամ արդիականացում

«Էլեկտրոնային արդարադատություն» և «Էլեկտրոնային դատարան» էլեկտրոնային համակարգերի ներդրմանը զուգահեռ հարկ է անդրադարձ կատարել նաև Արդարադատության նախարարության ոլորտներին վերապահված հանրային գործառույթների և տվյալների բազաների թվայնացմանն ու արդիականացմանը՝ հաշվի առնելով դրանց դերն ու նշանակությունը՝ էլեկտրոնային արդարադատության համակարգի ստեղծմանն ուղղված ռազմավարական նպատակի իրագործման ճանապարհին:

2020 *Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի արդիականացում*

Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (azdarar.am) կայքը (այսուհետ՝ Կայք) ստեղծվել է 2007 թվականին, որից հետո 2009 թվականին ծրագրում կատարվել են որոշակի փոփոխություններ: Կայքը գործարկվել է 2011 թվականին:

2011-ից 2015 թվականների ընթացքում Կայքում մուտքագրվում էր օրական միջինում 150 հայտարարություն, այժմ օրական մուտքագրվող հայտարարությունների միջին քանակը հասնում է 800-ի, որոշ օրերի՝ մինչև 1200-ի: Արդյունքում՝ կտրուկ ավելացել է Կայքի ծանրաբեռնվածությունը, որն էլ հանգեցրել է Կայքի աշխատանքի դանդաղեցման:

Հանդիսանալով հրապարակային ծանուցումների հարթակ՝ օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մամուլում հրապարակելու միջոցով, հրապարակային ծանուցումը տեղադրվում է Կայքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կայքի տեխնիկական հնարավորությունները չեն համապատասխանում արդի պահանջներին, անհրաժեշտ է արդիականացնել այն նոր ծրագրային լուծումներով և ապահովել հայտարարությունների և ծանուցումների հրապարակումը մեկ միասնական գործուն մեխանիզմի միջոցով, ինչպես նաև ներդնել անհատական ծանուցումների համակարգ:

2. Մշակել և ներդնել Ազգային արխիվի էլեկտրոնային միասնական կառավարման համակարգ

Ազգային արխիվի կողմից տրամադրվող ծառայությունների պահանջարկը

տարեցտարի ավելանում է, օրինակ՝ 2016 թ.-ի համամեմատությամբ 2021 թ.-ին միայն ֆիզիկական անձանց տրամադրված տեղեկանքների թիվը շեշտակիորեն աճել է՝ 2016 թվականին կազմելով 35000 տեղեկանք, 2021 թվականին՝ 58000: Չնայած դրան, Հայաստանի ազգային արխիվը դեռևս չունի էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման հնարավորություն, որն էականորեն ազդում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց ծառայությունների մատուցման գործընթացի արագության և արդյունավետության վրա:

Մի կողմից՝ պահանջարկի մեծացմամբ, մյուս կողմից՝ քաղաքացիներին առավել արագ և որակյալ ծառայությունների մատուցման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կարևոր է արխիվային ծառայությունների արդիականացումը և դրանց՝ ժամանակից պահանջներին համապատասխանեցումը:

Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի էլեկտրոնային միասնական կառավարման համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի թվայնացնել մատուցվող ծառայությունները, համակցել այն «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգին, ապահովել բոլոր մարմինների հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը: Համակարգը նաև հնարավորություն կտա յուրաքանչյուր անձի էլեկտրոնային գործիքակազմի միջոցով դիմել Արխիվ և ստանալ էլեկտրոնային բնօրինակ փաստաթղթեր, ինչպես նաև ապահովել արխիվային նյութերի երկարաժամկետ պահպանությունը:

3. Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացում

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համակարգը հնարավորություն է տալիս կատարել իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների պետական գրանցում/հաշվառում, փոփոխությունների պետական գրանցում/հաշվառում, լուծարման պետական գրանցում և հաշվառումից հանում:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի բազայում պահվում են տեղեկություններ Հայաստանի Հանրապետությունում գրանցված բոլոր իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների մասին:

Համակարգի ծրագրային ապահովումը ստեղծվել է 2011 թվականին և դրանից հետո չի թարմացվել: Համակարգն ուղղված է «մեկ պատուհան» սկզբունքի իրագործմանը, սակայն համակարգի միջոցով ներկայումս հնարավոր չէ իրականացնել մի շարք գործառույթներ, որոնք արդյունավետ են ժամանակի խնայողության, վարչարարության նվազեցման, գործարար միջավայրի և մատուցվող ծառայությունների բարելավման ուղղություններում, մասնավորապես՝

• օրենքով սահմանված կարգով գործակալության կողմից իրականացվող գործառույթների հետ կապված փաստաթղթերը, ներառյալ՝ գրանցամատյանից տրամադրվող քաղվածքները, պետական գրանցման և պետական հաշվառման մերժման մասին որոշումները և այլ փաստաթղթեր կազմվում են էլեկտրոնային փաստաթղթերի ձևով, սակայն համակարգի տեխնիկական հնարավորությունները թույլ չեն տալիս ապահովել համապատասխան փաստաթղթերի ուղարկումն անձի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին՝ ինքնաշխատ եղանակով,

• համակարգը հնարավորություն չի տալիս իրականացնել լրատվամիջոցների հաշվառումը, այլ մարմնի կողմից գրանցված/հաշվառված կազմակերպությունների «վերագրանցումը», փակ բաժնետիրական ընկերությունների գրանցումը,

• հասարակական կազմակերպությունների գրանցումը,

• սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի գրանցումը և այլն:

Ոլորտի բարեփոխումների ծրագիրն ուղղված է վերը ներկայացված խնդիրների լուծմանը, ինչպես նաև՝ ռեգիստրի ծրագրային ապահովման արդիականացմանը և ռեգիստրի տվյալների հանրային հասանելիության ապահովմանը:

4. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի թվային արխիվների ստեղծում

2021 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում պահպանվում են ընդհանուր առմամբ անհատ ձեռնարկատերերի 149780 ընթացիկ արխիվային գործեր, 160900 հաշվառումից հանված անհատ ձեռնարկատերերի արխիվային գործեր, 98295 իրավաբանական անձանց (այդ թվում՝ դրանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների), պետական մարմինների և կառավարչական հիմնարկների ընթացիկ արխիվային գործեր և 55680 լուծարված իրավաբանական անձանց և հաշվառումից հանված առանձնացված ստորաբաժանումների արխիվային գործեր, որոնք իրենց մեջ պարունակում են մոտավորապես 14 մլն թերթ:

Մինչ օրս նշված փաստաթղթերն ամբողջությամբ թվայնացված չեն (թվայնացման՝ մինչև 2012 թվականն իրականացված աշխատանքների շրջանակներում թվայնացվել են միայն գործող իրավաբանական անձանց վերջին կանոնադրությունները):

Պետական գրանցման և հաշվառման գործընթացն ամբողջովին էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել վերը նշված փաստաթղթերի թվայնացման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա ապահովել դրանց մատչելիությունը և երկարաժամկետ պահպանությունը:

Նախատեսվում է, որ արխիվային փաստաթղթերի սկանավորման, թվայնացված տվյալների շտեմարանների, հաշվառման և վիճակագրական տվյալների

հավաքագրման գործընթացում կներգրավվեն նաև սահմանափակ կարողություններով կամ հաշմանդամություն ունեցող անձինք:

5. Էլեկտրոնային եղանակով նոտարի կողմից՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ կնքված պայմանագրերի և փաստաթղթերի վավերացման և փոխանակման համար անհրաժեշտ պայմանների ապահովում

Նոտարների և ֆինանսական կառույցների (բանկեր, վարկային կազմակերպություններ) միջև կապ ապահովող էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը հնարավորություն կստեղծի էլեկտրոնային եղանակով փոխանակել փաստաթղթերը և վավերացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ կնքված ապառիկ վաճառքի պայմանագրերը: Համակարգի արդյունավետ գործարկման նպատակով կսահմանվեն էլեկտրոնային պայմանագրերի տիպային ձևերը, դրանց էլեկտրոնային վավերացման կարգը, ինչպես նաև նոտարների և ֆինանսական կառույցների միջև փաստաթղթերի փոխանակման կարգը:

Այսպիսի կարգավորումները հնարավորություն կտան նաև կատարողական մակագրության թերթերը տրամադրել էլեկտրոնային եղանակով՝ ընդլայնելով կատարողական մակագրության թերթի տրամադրման ինստիտուտը: Համակարգի ներդրման արդյունքում կբարձրանա նոտարական ծառայությունների մատուցման արագությունը և որակը:

Միաժամանակ, օրենսդրական փոփոխությունների իրականացմամբ պետք է ապահովել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով նոտարի կողմից գործարքների վավերացման հնարավորությունը: Եթե գործարքն ունի միայն մեկ կողմ, նոտարի կողմից գործարքը կարող է վավերացվել էլեկտրոնային տեսահաղորդակցության միջոցներով, եթե այդ միջոցները թույլատրում են ուղղակի տեսողական շփում գործարքի կողմի և նոտարի միջև, իսկ գործարքի կողմը հայտնի է նոտարին կամ նրա նույնականացումը և ինքնությունը ստուգելը հնարավոր է սահմանված կարգով: Նշված իրավիճակում ֆիզիկական անձի նույնությունը, ինքնությունը և գործունակությունը որոշվում է անձը հաստատող փաստաթղթերով և վավերական էլեկտրոնային ստորագրության առկայությամբ:

Իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների ընդունումից հետո կներդրվի էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով գործարքների վավերացման տեխնիկական հնարավորությունը, ինչպես նաև կապահովվի վավերացված փաստաթղթերի էլեկտրոնայնացումը: Այս գործիքը արդյունավետ կկիրառվի հատկապես տարածության վրա փաստաթղթերի կիրառությունն ապահովելու համար: Նշված եղանակով հնարավոր կլինի իրականացնել ինչպես Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, այնպես էլ օտարերկրյա պետության տարածքում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց գործարքների վավերացումը հեռահաղորդակցության միջոցներով:

6. Էլեկտրոնային սնանկության համակարգի ներդնում

Էլեկտրոնային արդարադատության շրջանակներում անհրաժեշտ է ներդնել էլեկտրոնային սնանկության համակարգ, որը ընդունված է և կիրառվում է մի շարք երկրներում՝ իր տարբեր դրսևորումներով: Այն հնարավորություն է տալիս սնանկության վարույթի իրականացումը՝ սկսած դրա հարուցումից մինչև վարույթի ավարտը, իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ առանց լրացուցիչ փաստաթղթաշրջանառության, մարդու միջամտությունը հնարավորինս բացառելով և գործընթացներն իրականացնելով առանց կողմերի անմիջական մասնակցության: Նշվածը հատկապես վերաբերում է սնանկության վարույթում աճուրդների իրականացմանը: Էլեկտրոնային սնանկության հարթակի ներդնումը և գործարկումը պետք է նպաստի սնանկության առավել թափանցիկ համակարգի կայացմանը: Այն պետք է հնարավորություն ընձեռի ապահովել դիմումների և այլ փաստաթղթերի ներկայացումը դատարանին, սնանկության կառավարչին և վարույթի մասնակիցներին, փաստաթղթերի և սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվության առցանց հասանելիությունը, իրականացնել էլեկտրոնային ծանու-ցումներ, կազմակերպել սնանկության կառավարիչների թեկնածուների ընտրությունը, գույքի էլեկտրոնային վաճառքը, հրապարակել հաշվետվություններ, ամփոփել վիճակագրական տվյալներ և այլն:

Էլեկտրոնային սնանկության համակարգը անհրաժեշտ է նաև ինտեգրել սնանկության գործերով էլեկտրոնային դատարանի մոդուլի հետ՝ ապահովելու համար սնանկության վարույթում դատարանի մասնակցությամբ և առանց դատարանի մասնակցության իրականացվող գործընթացների փոխգործելիությունը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՈՒՄ՝ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՄԲ

Անցումային արդարադատությունը գործընթացների և կառուցակարգերի ամբողջություն է, որի միջոցով իրականացվում է անցյալի համապարփակ, բազմակողմանի զննություն՝ ավելի լայն համատեքստում հասկանալու, թե ինչպես են ընդունվել կամ կիրառվել օրենքները, բացահայտվում են մարդու իրավունքների տեղի ունեցած համակարգային խախտումներն ու վերականգնվում խախտված իրավունքները, իսկ որոշ դեպքերում նաև հանգեցնում հաշտության կայացմանը:

Այս առումով հարկ է հաշվի առնել, որ անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար տեղի են ունեցել մարդու իրավունքների զանգվածային խախտումներ՝ զուգակցված երկրում համակարգային և քաղաքական կոռուպցիայի երևույթների կայուն առկայությամբ: Այս հանգամանքն ընդգծվել է մի շարք միջազգային զեկույցներում[5]:

Անցումային արդարադատության գործիքակազմի ներդրման և կիրառման ողջ գործընթացի հիմքում պետք է ընկած լինի այդ գործընթացների համապատասխանությունը Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին և օրենքներին, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել դրանց պատշաճությունը, իրավականությունը և արդյունավետությունը:

Այս համատեքստում Հայաստանի Հանրապետությունում համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման և անցկացման, հետընտրական գործընթացներում տեղի ունեցած քաղաքական հետապնդումների, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումների, անձանց սեփականության իրավունքից զրկելու այլ դրսևորումների, ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահվան դեպքերի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ վերոնշյալ դեպքերի և

---

[5] Տե՛ս, օրինակ, Universal Periodic Review – Armenia (https://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/AMindex.aspx), Trial Monitoring Project in Armenia (April 2008 – July 2009) – OSCE/ODHIR (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.osce.org/hy/odihr/75779), Resolution 1609 (2008) The functioning of democratic institutions in Armenia (հասանելի է հետևյալ հղումով՝ http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17643&lang=en), The Human Freedom Index (https://www.cato.org/human-freedom-index-new), Freedom in the World 2018 (հասանելի է հետևյալ հղումով՝ https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2018), Control of Corruption Indicator – Millennium Challenge Corporation (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.mcc.gov/who-we-fund/scorecards?fwp_scorecard_country=6170):

իրադարձությունների հետ համակարգային առումով փոխկապակցված այլ ոլորտներում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտման դեպքերը առանձնահատուկ ուսումնասիրման կարիք ունեն:

Վերը նշված խախտումների ոլորտների ընտրությունը պայմանավորված է այդ խախտումների բնույթով, մասշտաբներով և առաջացրած հետևանքներով: Մասնավորապես, տարիներ շարունակ ընտրական և հետընտրական գործընթացների ընթացքում մարդու իրավունքների զանգվածային խախտումների առկայության մասին ընդգծվել է Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից 2014 թվականին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին ներկայացրած զեկույցում[6]: Նշված զեկույցի մեջ արձանագրված է, որ Հայաստանի «պետական կառավարման համակարգի առավել խնդրահարույց ինստիտուտներից են ընտրությունները: Ընտրելու և ընտրվելու իրավունքն ինքնին առավել հաճախ խախտվող իրավունքներից է: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ընդգծել են, որ Հայաստանում տեղի ունեցած ընտրությունները նպաստել են քաղաքացիական հասարակության կողմից վերջին 15 տարիներին դիտարկված և արձանագրված կոռումպացված գործելաոճի այնպիսի դրսևորումների ամրապնդմանը, ինչպիսիք են ընտրակաշառքը, ընտրողների, դիտորդների և վստահված անձանց նկատմամբ ճնշումները և ահաբեկումը, բազմակի և «կարուսելային» քվեարկությունը, ընտրատեղամասերում հանցագործների կողմից իրականացվող վերահսկողությունը և քվեատուփերի լցոնումը»:[7]

Նախընտրական և հետընտրական գործընթացներում քաղաքական նպատակներով հետապնդումների մասին ևս առկա են միջազգային և ներպետական կազմակերպությունների կողմից արձանագրված խնդիրներ: Մասնավորապես, իր 2008 թվականի 1609 հանձնարարականում ԵԽԽՎ-ը կոչ է արել Հայաստանին բաց թողնել քաղաքական շարժառիթներով կալանավորված անձանց:[8] Քաղաքական հետապնդումներն ընդգրկել են քաղաքական գործիչների, նրանց հետ փոխկապակցված անձանց, ակտիվիստների և այլն:[9]

Ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի կողմից ներկայացված տվյալների համաձայն 1994-2019 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերում և Արցախի Հանրապետության Պաշտպանության

---

[6] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին Հայաստանի Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի համատեղ ներկայացրած զեկույցը տե՛ս http://www.un.am/up/file/UPR%20report%20from%20OSI_FFHR_Volume%20I_arm.pdf հղումով:

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] Տե՛ս http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17643&lang=en հղումով:

[9] Տե՛ս https://www.osce.org/odihr/34352?download=true հղումով:

Բանակում խաղաղ պայմաններում ընդհանուր առմամբ գրանցվել է 1121 մահ[10]: Ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ տարիներ շարունակ պարբերական զեկույցներով ու վերլուծություններով հանդես են եկել «Խաղաղության երկխոսություն»[11] և «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»[12] հասարակական կազմակերպությունները: Նշված կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքի մասին նշվել է նաև Ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրոյի մարդու իրավունքների 2018 թվականի զեկույցում:[13]

Սեփականության իրավունքի խախտումների առնչությամբ կարևոր է հիշատակել Կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն և դրան նախորդող 16.07.01 թիվ 645 և հարակից որոշումների հետևանքով (Հյուսիսային պողոտայի և Կենտրոն թաղամասի կառուցապատման վերաբերյալ) ՄԻԵԴ-ի կայացրած 11 վճիռները Հայաստանի դեմ՝ շուրջ 2 մլն. եվրո արժողությամբ վնասների հատուցմամբ:[14] Նշված ծրագրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից միայն 2004 թվականին ստացվել է 176, իսկ 2005 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում՝ 239 բողոք:[15]

Չնայած 2018թ. տեղի ունեցած քաղաքական իրադարձություններից հետո կատարված լայնածավալ բարեփոխումները էականորեն բարելավել են անձանց իրավունքների պաշտպանության և երաշխավորման կառուցակարգերը,

---

[10] Տե՛ս https://safesoldiers.am/category/վերլուծական/զեկույցներ-և-հրապարակումներ հղումով:

[11] «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://peacedialogue.am/:

[12] «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության զեկույցները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://hcav.am/:

[13] Տե՛ս https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2017_arm.pdf: Ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերից մեկով 2016թ. Նոյեմբերին ՄԻԵԴ-ը վճիռ է կայացրել, որ 2002թ. շարքային Սուրեն Մուրադյանի (ծառայում էր Արցախի Հանրապետության տարածքում) մահվան հարցում պետությունը խախտել է կյանքի իրավունքը և սահմանեց, որ պետությունը Մուրադյանի ընտանիքին վճարելու է 50.000 եվրոհատուցում: Թեպետ կառավարությունն այդ գումարը վճարեց, սակայն միջոցներ չձեռնարկվեցին Մուրադյանի մահվան մեջ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ (https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2018_arm.pdf):

[14] Տե՛ս ի թիվս այլնի Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի, (գանգատ թիվ 27651/05), Թունյանը և այլք ընդդեմ Հայաստանի, (գանգատ թիվ 22812/05), Դանիելյանը և այլք ընդդեմ Հայաստանի, (գանգատ թիվ 25825/05), Ղասաբյանը և այլք ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 23566/05), Բաղդասարյանը և Զարիկյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 43242/05), Վարդանյանը և Նանուշյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 8001/07), Ղարիբյանը և այլք ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 19940/05), «Հովհաննիսյանն ու Շիրոյանն ընդդեմ Հայաստանի» (գանգատ թիվ 5065/06), Սաֆարյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 576/06), «Երանոսյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» (գանգատ թիվ 3916/06), «Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի» (գանգատ թիվ 69936/10):

[15] Տե՛ս https://ombuds.am/images/files/0252f17326b9ec684029ae0da5bbbb9c.pdf: Սեփականության իրավունքի հետ առնչվող այլ խնդիրներին կարելի է ծանոթանալ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում, որոնք հասանելի են հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/SpecialReports:

այնուամենայնիվ, Հայաստանի անկախացումից ի վեր տեղի ունեցած համակարգային խախտումների պատճառների և հետևանքների ամբողջական բացահայտումը էական նշանակություն կարող է ունենալ հետագայում դրանց առաջացման ռիսկերը զսպելու և չեզոքացնելու, անձանց խախտված իրավունքները հնարավորինս ամբողջական վերականգնելու և ինստիտուցիոնալ բարեփոխումների շարունակականությունն ապահովելու հարցում: Նշված գործառույթների իրականացումը հնարավոր կլինի ապահովել փաստահավաք գործունեության միջոցով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Փաստահավաք գործունեության իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ներդնում

Անկախությունից ի վեր Հայաստանում տեղի ունեցած իրավունքների խախտումների դեպքերի ուսումնասիրության և դրանց վերաբերյալ տեղեկությունների հավաքման համար անհրաժեշտ է ձևավորել կառույց, որն իր հերթին, պետք է օժտված լինի այնպիսի գործառույթներով, որոնք հնարավորություն կտան ուսումնասիրել և քարտեզագրել 1991 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած մարդու իրավունքների զանգվածային և պարբերաբար կատարված խախտումների դեպքերը և դրանց պատճառները, առաջարկներ ներկայացնել բացահայտված խախտված իրավունքները վերականգնելու և պաշտպանելու, ինչպես նաև դրանց կրկնությունը բացառելու համար: Այս համատեքստում փաստահավաք գործառույթներով օժտված մարմինը պետք է ուսումնասիրի և հավաքագրի 1991 թվականի սեպտեմբերից ի վեր Հայաստանի Հանրապետությունում համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման և անցկացման, հետընտրական գործընթացներում տեղի ունեցած քաղաքական հետապնդումների, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումների, անձանց սեփականության իրավունքից զրկելու այլ դրսևորումների, ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահվան դեպքերի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերոնշյալ դեպքերի և իրադարձությունների հետ համակարգային առումով փոխկապակցված այլ ոլորտներում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտման դեպքերը:

Փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցն իրականացված ուսումնասիրություններից և բացահայտումներից հետո պետք է հնարավորություն ունենա հրապարակելու զեկույցներ՝ որպես իր կատարած աշխատանքների վերջնարդյունք՝ անդրադառնալով դեպքերի և իրադարձությունների ներկայացմանը, փաստերին, բացահայտված խախտումներին, դրանց արդյունքում կատարված եզրակացություններին, ինչպես նաև առաջարկություններին: Ընդ որում, նշված

զեկույցները կարող են հասցեական ուղարկվել համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դրանք ուսունասիրելու և, ըստ անհրաժեշտության, դրանցով պայմանավորված գործողություններ ձեռնարկելու համար: Իր հերթին, նշված զեկույցները կարող են ներկայացվել Ազգային ժողովի քննարկմանը՝ բացահայտումները ավելի արդյունավետ հանրային քննարկման առարկա դարձնելու, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, բացահայտումների լուծմանը և նման իրավիճակների հետագա կանխմանը ուղղված օրենսդրական նախաձեռնություններ իրականացնելու նպատակով:

Փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցն իր գործունեության ընթացքում ուսումնասիրված դեպքերի և իրադարձությունների շրջանակում և դրանց կրկնությունը կանխելու նպատակով մշակում է ինստիտուցիոնալ բարեփոխումներին ուղղված առաջարկություններ, այդ թվում ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններին, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցների, հանցագործությունների և իրավախախտումների բացահայտման և անձանց պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը, պետական և տեղական ինքնակառավարման ոլորտի արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը, հանրային ծառայողների բարեվարքության ամրապնդմանն ու բարելավմանը և այլն:

Նախանշված նպատակների իրականացման համար փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցի գործառույթները, ի թիվս այլնի, պետք է ներառեն խախտումներից տուժած անձանց կողմից ներկայացված տեղեկությունների փաստաթղթավորումը, խախտումներից տուժած անձանց համաձայնությամբ նրանց պատմությունները հանրայնացնելը, պետական մարմիններից տեղեկություններ պահանջելը, բացատրություններ տալու նպատակով անձանց հրավիրելը, ինչպես նաև իրավապահ և այլ անհրաժեշտ մարմինների գործունեության ուսումնասիրության մեթոդաբանության մշակումը և այդ գործունեությանը գնահատական տալը՝ անդրադառնալով նաև դրանց հիման վրա կոռուպցիոն սխեմաների բացահայտմանը: Վերը նշվածի համատեքստում, ի թիվս այլ մոդելների, որպես օրինակ կարող է դիտարկվել արդեն իսկ գործող մարմնի շրջանակներում նման կառույցի ստեղծումը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ժողովրդավարության կայացման և ամրապնդման շրջանակներում կարևոր նշանակություն ունի նաև ժողովրդավարական ինստիտուտների պարբերաբար առաջընթացը և զարգացումը: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է անդրադառնալ նաև դատական և իրավական բարեփոխումների համատեքստում ներառվող ժողովրդավարական ինստիտուտների, ինչպիսիք են սահմանադրությունը և ընտրական համակարգը, զարգացմանը:

Այսպես, 2015թ.-ի փոփոխություններով Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը կիսանախագահական կառավարման համակարգից անցում կատարեց խորհրդարանական կառավարման համակարգի, ինչի արդյունքում վերափոխվեց նաև ամբողջ սահմանադրաիրավական համակարգը՝ կանխորոշելով մի շարք ուղղություններով Հայաստանի Հանրապետության զարգացման հեռանկարները: Օրինակ՝ ի համեմատ 2005թ.-ի փոփոխություններով Սահմանադրության՝ էականորեն բարելավվեց մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանումը: Սակայն, Սահմանադրության իրավակիրառ պրակտիկայի և երկրում տեղի ունեցած իրավաքաղաքական իրադարձությունների արդյունքում հասարակության, այդ թվում մասնագիտական տարբեր շրջանակներում քննարկման առարկա է դառնում այն, որ Սահմանադրությամբ, այնուամենայնիվ, առկա են տարբեր խնդրահարույց կարգավորումներ, որոնք որոշակի առումով կարող են խաթարել սահմանադրական կարգի, սահմանադրական մշակույթի կայացումը, իրավունքի գերակայության սկզբունքի պատշաճ ապահովումը և սահմանադրաիրավական նորմերի անխաթար կիրառումը: Ուստի, սահմանադրական բարեփոխումների իրականացումը պետք է նպատակ հետապնդի բացահայտել նման խնդիրների առկայությունը և անհրաժեշտության դեպքում երաշխավորել սահմանադրական կայունությունը, սահմանադրական և այլ մարմինների պատշաճ գործունեությունը և անձանց հիմնական իրավունքների իրացումը:

Հետևաբար, սահմանադրական փոփոխությունների հիմնական նպատակը բոլոր տեսակի սուբյեկտիվ գործոններից զերծ, առանց որևէ ուղղորդման, ժողովրդի կողմից իր ազատ կամահայտնության արդյունքում ընդունված Սահմանադրություն ունենալն է:

Հաջորդիվ հարկ է նկատել, որ Կառավարության 2019-2023 թվականների ծրագրի, ինչպես նաև Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության համատեքստում ընտրական օրենսդրության շրջանակներում սահմանված նպատակներին համապատասխան իրականացվեցին մի շարք բարեփոխումներ: Մասնավորապես, 2021 թվականին Ընտրական օրենսգրքում

կատարվել են համապարփակ փոփոխություններ, որոնք լայնորեն քննարկվել և աջակցության են արժանացել կուսակցությունների և քաղաքացիական հասարակության խմբերի մեծ մասի կողմից: Արդյունքում պարզեցվել է ընտրակարգը և վերացվել է տարածքային ընտրացուցակների համակարգը, բարելավվել են կոալիցիաների ձևավորման, քարոզարշավների անցկացման կարգերը, բարձրացվել է ընտրությունների անցկացման թափանցիկությունը: 2021թ. տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունները ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելության կողմից գնահատվել են որպես մրցունակ և ընդհանուր առմամբ լավ կազմակերպված՝ հաշվի առնելով վերջինիս կազմակերպման համար նախատեսված կարճ ժամանակահատվածը, ընտրողներն ունեցել են ընտրության լայն հնարավորություն, կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել[16]: Բացի այդ, նոր օրենսդրությամբ 2021թ. համամասնական ընտրակարգով տեղի են ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների լայնածավալ ընտրություններ 38 խոշորացված համայնքներում:

Սակայն ընտրությունների արդյունքում ակնհայտ դարձավ, որ ընտրական օրենսդրության շրջանակներում առանձին ուղղություններով դեռևս առկա է շարունակական բարելավումներ կատարելու անհրաժեշտությունը՝ ընտրական իրավունքի պատշաճ իրացումը հնարավորինս լիարժեք ապահովելու նպատակով: Այս առումով, բարելավման անհրաժեշտության մասին են վկայում նաև ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատատությունների և մարդու իրավունքների գրասենյակի դիտորդական առաքելությունների՝ 2018 և 2021թթ. Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով կազմված զեկույցները, որոնք թեև ընդգծում են այս ոլորտում Հայաստանի ընտրական օրենսդրության դրական զարգացումները, սակայն միաժամանակ նշում են որոշ ուղղություններով դեռևս առկա փոփոխությունների անհրաժեշտությունը[17]:

Ընդ որում, որպես շարունակական բարեփոխումների հիմք պիտի ծառայեն ինչպես բարեփոխված ընտրական օրենսդրության փոփոխությունների կիրառման, հատկապես, 2021 թվականի խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում վեր հանված խնդիրները, այնպես էլ նախկինում գոյություն ունեցած խնդիրները, որոնց կապակցությամբ դեռևս անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումներ:

---

[16] Տե՛ս https://www.osce.org/files/f/documents/2/0/508394.pdf հղումով:

[17] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն, Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ, 9 դեկտեմբերի 2018թ.» ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցը՝ https://www.osce.org/files/f/documents/9/b/413564_0.pdf հղումով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետություն, Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ, 20 հունիսի 2021թ.» ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցը՝ https://www.osce.org/files/f/documents/2/0/508394.pdf հղումով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանադրական բարեփոխումների իրականացում

2022 թվականի հունվարի 27-ին սահմանադրական փոփոխություններ նախաձեռնելու համար Վարչապետի որոշմամբ ձևավորել է սահմանադրական բարեփոխումների խորհուրդ և հաստատվել են խորհրդի անհատական կազմն ու խորհրդի գործունեության կարգը: Նույն որոշման հիման վրա մրցութային ընթացակարգով ձևավորվել է նաև սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը՝ կազմված հինգ անդամից: Ընդ որում, հանձնաժողովի կազմում ընդգրկվել են իրավաբանական գիտությունների դոկտորի, իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան կամ օտարերկրյա պետությունում իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան և իրավունքի ոլորտում առնվազն յոթ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն ունեցող իրավաբաններ՝ ընտրված խորհրդի կողմից: Սահմանադրական բարեփոխումների խորհրդի հիմնական գործառույթն է բարեփոխումների ուղղությունների որոշումը, որոնց շրջանակներում մասնագիտական հանձնաժողովը իրականացնելու է հայեցակարգի և դրա հիման վրա նաև՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի մշակումը:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է ապահովել սահմանադրական բարեփոխումների խորհրդի և մասնագիտական հանձնաժողովի կողմից Սահմանադրության բարեփոխումների հայեցակարգի և նախագծի մշակման ուղղությունների հստակեցումը: Իր հերթին, սահմանադրական բարեփոխումների ներառականության ապահովման նպատակով անհրաժեշտ է քննարկումներ կազմակերպել հանրության լայն շրջանակների հետ, որոնց արդյունքում գեներացված կարիքների, խնդիրների և լուծման հնարավորությունների հիման վրա հնարավոր կլինի որոշել փոփոխությունների նպատակահարմարությունն ու օրակարգը, իսկ այնուհետև մշակել բարեփոխումների հայեցակարգը և ըստ անհրաժեշտության՝ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը:

Կայացած ընտրությունների ընթացքում ծագած և վերհանված խնդիրների վերհանման միջոցով ընտրական օրենսդրության բարեփոխում

Սահմանված ռազմավարական նպատակի համատեքստում անհրաժեշտություն է առաջանում վեր հանել 2018 և 2021 թվականների խորհրդարանական ընտրությունների, ինչպես նաև 2021 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակներում դրսևորված տարբեր իրավական և գործնական խնդիրները, այդ թվում՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման թվային գործիքների ընդլայնման, ընտրությունների ժամանակ անձի համընդհանուր (ոչ միայն տեղամասային մակարդակով) նույնականացման միասնական եղանակի ներդրման, այդ

թվում՝ տեղեկատվական շտեմարանների փոխգործելիությանն ուղղված նոր գործիքակազմերի ներդրման առնչությամբ: Իր հերթին, նախընտրական քարոզչության առնչությամբ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում ճիշտ հավասարակշռել նախընտրական քարոզարշավի ընթացքը, ապահովել հանրային հարթակների և ռեսուրսների հավասար հասանելիությունը: Ընտրական օրենսդրության բարելավման և ընտրական իրավունքի պատշաճ իրացման տեսանկյունից առանձնակի կարևորություն է ձեռք բերում վեր հանված խնդիրների համակարգումն ու գույքագրումը, որը կարող է հիմք հանդիսանալ ընտրական օրենսդրության վերանայման համար: Վերոնշյալի համար հիմք կարող են ծառայել նաև ընտրական օրենսդրության բարեփոխման նախկին գործընթացների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները, ինչպես նաև կայացած ընտրությունների վերաբերյալ միջազգային և տեղական դիտորդական առաքելությունների կողմից հրապարակված զեկույցներում արծարծված հարցերը:

Այնուհետև, Ընտրական օրենսդրության գույքագրված խնդիրների լուծման կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանալու մշակել դրանց վերացմանն ուղղված իրավական նորմեր և կառուցակարգեր և օրենսդրությամբ սահմանված կարգով նախաձեռնել դրանց քննարկումն ու ընդունումը Ազգային ժողովի կողմից:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ժողովրդավարական և իրավական պետություն, հանձն է առել շարունակաբար ամրապնդել և զարգացնել ժողովրդավարական ինստիտուտները, որպիսի նպատակի իրականացման տեսանկյունից առաջնային կարևորություն ունի անկախ և անաչառ դատական համակարգի առկայությունը: Այս համատեքստում, 1985 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված Դատական իշխանության Անկախության սկզբունքների[18] համաձայն՝ դատական իշխանության անկախությունը պետք է երաշխավորվի տվյալ պետության կողմից և ամրագրում ստանա Սահմանադրության կամ օրենքի մակարդակում: Դատական իշխանության անկախությունը ապահովելը բոլոր պետական և ոչ պետական կառույցների պարտականությունն է: Ավելին, սկզբունքներով սահմանվել է դատական գործընթացների անհարկի միջամտության ու կայացված դատական որոշումները վերանայելու արգելքը: Իր հերթին, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարականով[19] սահմանվում է դատարանների անկախության նպատակը, համաձայն որի՝ այն նպատակ ունի երաշխավորել յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը՝ առանց անհարկի ճնշումների և հիմնվելով իրավական հիմքերի վրա: Դատավորների անկախությունը պետք է դիտարկվի որպես ազատության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և օրենքի անաչառ կիրառության երաշխիք:

Վերոգրյալի համատեքստում դատական իշխանության անկախության ապահովման կարևոր նախադրյալներից են արդարադատության արդյունավետության բարձրացումը և դատական պրակտիկայի միասնականության ապահովումը, արդարադատության իրականացման ոլորտում իրավական որոշակիության առկայությունը, դատական գործերի քննության ողջամիտ ժամկետների առավել լիարժեք պահպանման ապահովումը և դատահրավական ժամկետների խնայողության սկզբունքի արդյունավետ իրականացման նպատակի

---

[18] Basic Principles on the Independence of the Judiciary, Adopted by the Seventh United Nations Congress on 1985, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/-independencejudiciary.aspx:

[19] Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարական, կետ 3

իրացումը: Նշվածով պայմանավորված՝ դատական համակարգի շարունակական բարեփոխումները, ի թիվս այլնի, պետք է նպատակ հետապնդեն.

- երաշխավորել արդարադատության արդյունավետության բարձրացման և դատական պրակտիկայի միասնականության ապահովումը, ինչպես նաև արդարադատության իրականացման ոլորտում սահմանել իրավական որոշակիության ավելի բարձր նշաձող, ապահովել դատական գործերի քննության ողջամիտ ժամկետների առավել լիարժեք պահպանման և դատավարական ժամկետների խնայողության սկզբունքի արդյունավետ իրականացման նպատակի իրացումը.
- ապահովել դատարանների մասնագիտացումների և դատավորների ենթամասնագիտացումների առկայությունն իրավունքի տարբեր ենթաոլորտներում, որի միջոցով մի կողմից կերաշխավորվի գործերի առավել մասնագիտական քննությունը, հատկապես երբ խոսքը վերաբերում է բարդ, համալիր իրավահարաբերությունների և նեղ մասնագիտական գիտելիքների կիրառություն պահանջող գործերի քննությանը, մյուս կողմից՝ հնարավորություն կստեղծի վերաբաշխելու դատական համակարգի ընդհանուր ծանրաբեռնվածությունը.
- բարձրացնել դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի օբյեկտիվությունը և հիմնավորվածությունը.
- ապահովել դատական համակարգում դատավորների վարձատրության շարունակական բարձրացումը՝ սկսած բարձր ատյաններից.
- ապահովել դատավորների բարեվարքության շարունակական ստուգումը.
- շարունակել դատարանների շենքային պայմանների բարելավման գործընթացը.
- և այլն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատարանների մասնագիտացման կամ դատավորների ենթամասնագիտացման, կարողությունների, ինչպես նաև բարեվարքության կառուցակարգերի զարգացման շարունակական ապահովում

Ինչպես հասարակական հարաբերությունները, այնպես էլ իրավունքը պարբերաբար և անընդհատ զարգանում են, ինչն անհրաժեշտություն է առաջացնում նախատեսել նոր կամ զարգացած հասարակական հարաբերությունների շրջանակներում ծագած իրավական վեճերի լուծման նոր մոտեցումներ և կառուցակարգեր: Այս առումով, հարկ է նկատի ունենալ, որ զարգացումները հաճախ տեղի են ունենում իրավունքի միևնույն ոլորտում՝ առաջացնելով դրա ճյուղավորումներ

տարբեր ենթաոլորտներով, որոնց համապատասխան ճյուղավորվում են նաև իրավաբանների, այդ թվում վեճերը լուծող դատավորների մասնագիտացումները: Արդյունքում, օբյեկտվորեն տարբեր դատավորներ առավել մասնագիտանում են իրավունքի այս կամ այն ենթաոլորտում՝ ըստ համապատասխան ենթամասնագիտացումների. օրինակ՝ կոռուպցիոն հանցագործություններ, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր, առևտրային վեճեր, հարկային իրավախախտումների գործեր և այլն: Նման պարագայում, երբ զարգացումները տեղի են ունենում առավելապես ենթամակարդակներում, առավել նպատակահարմար է թվում ոչ միայն առանձին մասնագիտացված դատարանների ստեղծումը, այլև ընդհանուր իրավասության կամ որևէ մասնագիտացված դատարանում առանձին ենթամասնագիտությամբ դատավորների նախատեսումը կամ ընդհանուր իրավասության դատարանների այնպիսի վերաիմաստավորումը, որի դեպքում դրանք կկարողանան առանձին քննել նման ենթաոլորտների շրջանակներում ծագող վեճերը: Ներկայումս դատավորների մասնագիտացման առումով նախատեսված է նրանց մասնագիտացումն ըստ իրավունքի ոլորտների՝ քաղաքացիական, քրեական և վարչական, իսկ քաղաքացիական մասնագիտացման ներսում՝ նաև սնանկության մասնագիտացումը: Հատկանշական է, որ ենթամասնագիտացումների զարգացման միտումները արդեն իսկ դրսևորվում են հայաստանյան իրավական համակարգում. մասնավորապես, օրինակ, ներդրվել է մինչդատական քրեական վարույթի և օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերաբերյալ միջնորդություններ քննող դատավորների ինստիտուտը, Վճռաբեկ դատարանում ներդրվել են վարչական և հակակոռուպցիոն պալատները: Իր հերթին, օրենսդրությամբ առկա է առանձին տեսակի գործերով դատավորների առանձնացման հնարավորությունը: Այնուամենայնիվ, ինստիտուցիոնալ առումով նման մեխանզիմներ ներկայումս ներդրված չեն, և դա թողնված է Բարձրագույն դատական խորհրդի հայեցողությանը:

Իր հերթին, նշվածի համատեքստում հատուկ կարևորվում է նաև դատավորների կարողությունների զարգացման շարունակական ապահովումը, որը միտված կլինի արդյունավետ արդարադատության ապահովմանը, դատական պաշտպանության իրավունքի պատշաճ երաշխավորմանը, դատավորների մասնագիտական որակների բարձրացմանը, ինչպես նաև դատավորների մասնագիտացման (ենթամասնագիտացման) կայուն զարգացման ապահովմանը: Այս համատեքստում անհրաժեշտ է իրականացնել դատավորների վերապատրաստումներ, հատկապես նոր ներդրված մասնագիտացումներով, ինչպես օրինակ՝ հակակոռուպցիոն դատարանների դատավորներն են:

Բացի այդ, անհրաժեշտ է նախատեսել դատավորների բարեվարքության շարունակական ստուգման կառուցակարգեր, որոնց ընթացքում կիրականացվի

գույքային դրության, անհամատեղելիության պահանջների պահպանվածության, շահերի բախման իրավիճակների, այլ սահմանափակումների և օրենքով նախատեսված այլ պահանջների և տեղեկատվության ստուգում:

Հարկ է նշել, որ ներկայումս առկա կարգավորումները թույլ են տալիս իրականացնել միայն նոր նշանակվող և առաջխաղացման ենթակա դատավորների բարեվարքության ստուգում, իսկ հետագայում ստուգվում է միայն վերջիններիս գույքային դրությունը: Արդյունքում բացակայում է հնարավորությունը բացահայտելու պաշտոնավարման ընթացքում անհամատեղելիության պահանջների, շահերի բախման, այլ սահմանափակումների առկայությունը և օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

Այսպիսով, թեպետ օրենսդրությամբ առկա են դատավորների բարեվարքության ստուգմանն ուղղված մեխանիզմներ, այնուամենայնիվ, առկա կառուցակարգերը հնարավորություն չեն տալիս լիարժեք պատկեր կազմել դատական համակարգի ընդհանուր բարեվարքության վերաբերյալ:

Այդ է պատճառը, որ նախատեսվում է ձևավորել բարեվարքության ստուգման «երկաստիճան» համակարգ, որի գործողությունը կտարածվի թե՛ նոր նշանակվող, թե՛ առաջխաղացման ենթակա դատավորների և թե՛ գործող դատավորների բարեվարքության գնահատման նկատմամբ: Առաջարկվող կառուցակարգի ներդրմամբ հնարավորություն կստեղծվի ստուգել դատավորների բարեվարքությունը պաշտոնը ստանձնելու և առաջխաղացման փուլերում (նախնական ստուգում), իսկ հետագայում իրականացնել ընթացիկ ստուգում, որը կապահովի գործող դատավորների բարեվարքության շարունակական գնահատումը:

Միաժամանակ, պետք է արձանագրել, որ դատավորների բարեվարքության պարբերական ստուգման իրականացումը կարևոր նշանակություն ունի դատական համակարգում կոռուպցիայի կանխարգելման համար: Մյուս կողմից, նշված քայլերը կապահովեն դատավորի բարեվարք կերպարի ձևավորումը՝ դրանով իսկ նպաստելով հանրության մոտ դատական իշխանության նկատմամբ վստահության բարձրացմանը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի արդյունավետության բարձրացում

Ներկայումս Երևան քաղաքում գործում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որին ենթակա են քրեական և քաղաքացիական գործերի քննությունը: Հատկանշական է, որ դատարանին հատկացվող տարեկան բյուջեն կազմում է շուրջ 4,2 մլրդ ՀՀ դրամ (2021թ.-ի համար), ինչպես նաև այդտեղ գործում են թվով 72 դատավորներ, որոնցից 33-ը քրեական, իսկ 39-ը քաղաքացիական մասնագիտացմամբ: Այս համատեքստում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի անձնակազմը ամենամեծն է Հայաստանի

դատական համակարգում, ինչով պայմանավորված էլ դրա գործունեության ղեկավարման կապակցությամբ առաջանում են տարատեսակ բարդություններ:

Այսպես, այս դատարանի աշխատանքը համակարգվում և ղեկավարվում է մեկ անձի՝ դատարանի նախագահի կողմից: Նման պարագայում օբյեկտիվորեն բարդություններ են առաջանում դատարանի բնականոն գործունեությունը ապահովելու, դատարանի աշխատակազմի գործունեությունը վերահսկելու և նման այլ հարցերում: Բացի այդ, առկա է անհրաժեշտություն բարելավելու դատարան մուտք լինող գործերի՝ դատավորների միջև օպերատիվ բաշխման ընթացքը՝ հաշվի առնելով, որ ներկայումս Երևան քաղաքի դատարանը ունի 6 նստավայր:

Ուստի, անհրաժեշտ է ուսումնասիրել Երևան քաղաքում առաջին ատյանի քրեական և քաղաքացիական դատարաններ ձևավորելու իրավական հնարավորությունը և ըստ անհրաժեշտության մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ նշված դատարանների ձևավորման վերաբերյալ:

Դատավորների վարձատրության շարունակական բարձրացում՝ սկսած բարձր ատյաններից

Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորների վարձատրության հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ աշխատավարձի չափը, կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք): Օրենքով Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանված վարձատրության չափը, սակայն, չի համապատասխանում վերջիններիս կողմից կատարվող պարտականությունների բնույթին և նրանց վրա դրված առաջադրանքների կարևորությանը: Դատավորի պաշտոնին ու պատասխանատվությանը համապատասխանող պատշաճ վարձատրության ապահովման անհրաժեշտության մասին նշվել է նաև «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի աջակցությամբ իրականացվող «Դատական իշխանության անկախության ապահովումը դատաիրավական բարեփոխումների համատեքստում» ծրագրի շրջանակներում պատրաստված «Դատական իշխանության անկախության ապահովում ֆինանսավորման միջոցով» զեկույցում[20]:

[20] Տե՛ս https://www.osf.am/wp-content/uploads/2022/02/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%-B8%D6%82%D5%B5%D6%81-%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AB%D5%B7%D5%AD%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%B8%D5%BE%D5%B8%D6%82%D5%B4-

Այս առումով պետք է նկատի ունենալ, որ օրինակ, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-337-Ն օրենքով հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, սահմանվեց հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 տոկոսի չափով: Նույն ձևով վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորների և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորների համար, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, սահմանվեց հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով: Որպես նշված փոփոխությունների տրամաբանական շարունակություն՝ անհրաժեշտ է նախ և առաջ վերանայել Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորների վարձատրության չափը: Նման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ներպետական համակարգում ամրագրված՝ Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի սահմանդրական կարգավիճակով, գործունեության վերաբերյալ առկա կարգավորումներով, այնպես էլ միջազգային կառույցների կողմից դատական համակարգին տրվող երաշխիքների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումներով: Որպես նշված գործընթացի շարունակականություն՝ անհրաժեշտ է աստիճանաբար քայլեր ձեռնարկել նաև մյուս ատյաններում դատավորների սոցիալական երաշխիքների վերանայման առումով:

Հակակոռուպցիոն դատարանի շենքային և նյութատեխնիկական հագեցվածության ապահովում

Հակակոռուպցիոն դատարանի ձևավորման գործընթացը սկսվել է 2021 թվականին՝ համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Ներկայումս, արդեն իսկ, ընթանում է դատավորների թեկնածուների ընտրության գործընթացը, սակայն դատարանի ձևավորման և գործունեությունը սկսելու համար առկա չեն շենքային պայմաններ և նյութատեխնիկական հագեցվածություն: Մասնավորապես, առկա է անհրաժեշտություն քաղաք Երևանում կառուցել հակակոռուպցիոն դատարանի և հակակոռուպցիոն կոմիտեի նոր շենքային համալիր, ինչպես նաև Արա Սարգսյան 5/1, Գարեգին Նժդեհի 23/1 և Թբիլիսյան խճուղի 3/9,

%D6%86%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6%D5%BD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%AB%D5%BB%D5%B8%D6%81%D5%B8%D5%BE.pdf

հղումով, էջ 57:

Բաշինջաղյան 100 հասցեներում իրականացնել շինարարական և վերանորոգողական աշխատանքներ՝ ապահովելու համար Հակակոռուպցիոն դատարանի դատավորների (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի) անհրաժեշտ շենքային պայմանները և դատարանի բնականոն գործունեությունը:

Դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի բարելավում

2020 թվականին Դատական օրենսգրքում կատարված փոփոխություններով մի շարք նորամուծություններ մտցվեցին դատավորների ընտրության և նշանակման գործընթացում, այդ թվում՝ որակավորման ստուգման արդյունքների բողոքարկման, ինչպես նաև հարցազրույցի փուլում գրավոր քննության արդյունքները հաշվի առնելու կարգավորումների մասով: Այնուամենայնիվ, դատավորների ընտրության և նշանակման գործընթացի նկատմամբ վստահության, ինչպես նաև գործընթացի օբյեկտիվության բարձրացման տեսանկյունից կարևոր է նաև այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել գործընթացի գրավոր և բանավոր փուլերի արդյունքների համադրումը՝ գնահատման միասնական համակարգի միջոցով: Իր հերթին, անհրաժեշտ է վերանայել նաև դատավորների ներգրավման օրենսդրական կարգը, ինչը հնարավորություն կտա տարբեր բարձր մասնագիտական պահանջների բավարարող անձանց համար սահմանել առավել ճկուն ընթացակարգեր՝ ապահովելով դատական համակարգի գրավչության բարձրացումը, ինչպես նաև ավելի մեծ թվով պրոֆեսիոնալ անձնացով համալրումը: Միևնույն ժամանակ, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն նույնպես կարևորում է դատական նշանակումների իրականացումը օրենքով նախատեսված օբյեկտիվ չափանիշների հիման վրա[21]՝ հաշվի առնելով անձի որակավորումը, բարեվարքությունը, կարողությունները և արդյունավետությունը[22]:

Այս առումով գործընթացի բարելավման անհրաժեշտությունը ընդգծվել է նաև Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարության այլընտրանքային մշտադիտարկման արդյունքում[23]:

---

[21] Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 հանձնարարական, տե՛ս https://www.icj.org/wp-content/uploads/2014/06/CMRec201012E.pdf հղումով:

[22] Դատավորների աշխատանքի գնահատման, արդարադատության որակի և դատականանկախության նկատմաբ հարգանքի վերաբերյալ Եվրոպական դատավորներիխորհրդատվական խորհրդի թիվ 17 կարծիք, 2014, տե՛ս https://www.ejtn.eu/Documents/About%20EJTN/RoL%20Project/RoL_2019_02_Brussels-/CCJE%20Opinion%20no%2017%20on%20the%20evaluation%20of%20judges%60%20work,%20quality%20of%20justice%20and%20respect%20for%20judicial%20independence.pdf հղումով:

[23] Տե՛ս Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից կազմված «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության 2019-2021 թվականների մշտադիտարկման արդյունքների» զեկույցը https://armla.am/wp-

Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով որոշումների բողոքարկման իրավական հնարավորության նախատեսում

Դատարանների և դատավորների անկախությունն ապահովող մարմինների, ինչպիսիք են դատական խորհուրդները կամ կարգապահական դատարանները, դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ անցկացնելու լիազորությանը զուգահեռ անհրաժեշտ է որպեսզի գոյություն ունենա նաև կարգապահական գործերով որոշումները բողոքարկելու հնարավորություն[24]: Այս համատեքստում Սահմանադրությանը և Դատական օրենսգրքին համապատասխան Հայաստանում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցերը լուծում է Բարձրագույն դատական խորհուրդը՝ գործելով որպես դատարան: Սակայն, հարկ է նկատել, որ բացակայում է Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով կայացրած որոշումները բողոքարկելու, այն է մեկ այլ անձանց կողմից նույն (այլ ոչ թե նոր ի հայտ եկած) փաստերի և ապացույցների հիման վրա կայացված որոշման օրինականության և արժանահավատության ստուգման իրավական հնարավորությունը[25]: Այսպես, Վենետիկի հանձնաժողովը, նշված իրողությունը դիտարկելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածի լույսի ներքո, ընդգծել է Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման իրավական հնարավորության նախատեսման կարևորությունը: Իր հերթին, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը նույնպես կարևորել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումները դատական վերանայման օբյեկտ դիտարկելը[26]: Դատական օրենսգրքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորության նախատեսման հարցը բարձրացվել է նաև Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) զեկույցներում: Մասնավորապես, ԳՐԵԿՈ-ի գնահատման խումբը դեռևս 2015 թ.-ին կազմված

---

content/uploads/2022/05/%D4%B4%D4%BB%D4%B2%D5%8C_%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_%D4%BB%D5%80%D4%B1.pdf հղումով:

[24] «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) դատական համակարգի անկախության մասին զեկույց, մաս 1. «Դատավորների անկախությունը», կետ 43, էջ 9:

[25] Այլ առումով Վենետիկի հանձնաժողովը վկայակոչել է նաև, որ ԲԴԽ-ի կողմից իր անդամների 2/3-ի համաձայնությամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին կարգավորումը կարող է շատ բարձր շեմ լինել :

[26] Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 հանձնարարական, տե՛ս https://www.icj.org/wp-content/uploads/2014/06/CMRec201012E.pdf հղումով:

զեկույցի շրջանակներում ընդգծել է կարգապահական որոշումները դատարանում բողոքարկելու դատավորների իրավունքի կարևորությունը, ի հակադրություն այդ պահին ներկա իրավիճակի, երբ գործի էր դրվում միայն Արդարադատության խորհուրդը, որը պետք է «գործի որպես դատարան», և դատավորներին հնարավորություն չէր տրվում վիճարկել Արդարադատության խորհրդի որոշումները», ըստ էության, ինչպես ներկայումս Բարձրագույն դատական խորհրդի դեպքում է[27]: Այնուհետև, 2021 թվականի համապատասխանության միջանկյալ զեկույցում նշվել է, որ թեև դատավորների աշխատանքի ընդունման և առաջխաղացման վերաբերյալ որոշումների բողոքարկման պատշաճ մեխանիզմներ ստեղծվել են, սակայն դա չի վերաբերում աշխատանքից ազատումներին[28]:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտություն է առաջանում բարեփոխել նաև վերաբերելի օրենսդրությունը՝ ապահովելով Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով կայացված որոշումների բողոքարկման իրավական հնարավորությունը: Ընդ որում, որպես առաջարկվող կառուցակարգին առավել հստակություն հաղորդող լուծում կարելի է քննարկել կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ հանդես եկող անձին նաև պատասխանատվության միջոցը միջնորդելու իրավասության վերապահումը: Իր հերթին, հաշվի առնելով գործող սահմանադրաիրավական նորմերը, որպես առաջարկվող լուծում կարելի է դիտարկել հենց Բարձրագույն դատական խորհրդի շրջանակներում նման բողոքների քննությունը:

Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամների թվի հարաբերակցության վերանայում

Ներկայումս դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է 8 անդամներից, որոնցից ոչ դատավոր անդամների թիվը սահմանափակվում է 2-ով: Արդյունքում, սակայն, դատավոր անդամները, միևնույնն է, ունենում են գերակշիռ մասնակցություն հանձնաժողովի կազմում և դրա որոշումների կայացման ընթացքում:

Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ Վենետիկի հանձնաժողովի կարծիքին ներկայացված Դատական օրենսգրքի փոփոխությունների նախնական տարբերակում հանձնաժողովի կազմում նախատեսված էր երեք ոչ դատավոր անդամների ներգրավում, ինչը Վենետիկի հանձնաժողովը ողջունելի էր համարել՝ հանձնաժողովի գործունեությունը արտաքին վերահսկողության/դիտարկման համար

[27] Տե՛ս Greco Eval IV Rep (2015) 1E:
[28] Տե՛ս GrecoRC4(2021)15:

առավել բաց դարձնելու տեսանկյունից[29]: Իր հերթին, 2017 թ.-ի հոկտեմբերին Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքում[30] Վենետիկի հանձնաժողովը ընդգծել է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում կորպորատիվ մոտեցում որդեգրելու ռիսկերը՝ առաջարկելով հանձնաժողովի կազմի հավասարակշռումը ոչ դատավոր անդամների ընդգրկման միջոցով:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է վերանայել դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հանձնաժողովում որոշումների կայացման գործընթացում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը:

[29] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն համատեղ թիվ CDL-AD(2019)024 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2019)024-e հղումով:

[30] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի թիվ CDL-AD(2017)019 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)019-e հղումով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ՔՐԵԱՒՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Քրեական և քրեական դատավարության ոլորտի բարեփոխումները պայմանավորված են ոլորտային նոր օրենսգրքերի ընդունմամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել ինչպես նոր օրենսգրքերի կիրակումը, այնպես էլ դրանց պրակտիկ կիրառման համար ստեղծել անհրաժեշտ իրավական և գործնական նախադրյալներ:

Միևնույն ժամանակ, բարեփոխումների տրամաբանությունից բխում է նաև քրեակատարողական և պրոբացիայի ոլորտներում համակարգային բարելավումների իրականացումը: Ընդ որում, բարելավումները պետք է իրականացվեն ինչպես ընթացակարգային, այնպես էլ կադրային և նյութական ռեսուրսների զարգացման ուղղություններով, ներառյալ՝ էլեկտրոնային գործիքների ներդնումը: Էլեկտրոնային արդարադատության համակարգերի ներդնմանը զուգահեռ իրավական դաշտի համապատասխանեցումը և նախապատրաստումը բխում են նաև այս ոլորտում սահմանված Եվրոպայի խորհրդի չափանիշներից. օրինակ՝ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից մշակված ուղեցույցի համաձայն՝ էլեկտրոնային արդարադատության վերաբերյալ օրենսդրությունը անհրաժեշտ նախապայման է դատական ընթացակարգերի հաջող թվայնացման համար[31]: Իր հերթին, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, նույնպես ընդգծելով նախօրոք օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, նշել է նաև, որ դրանք պետք է ուժի մեջ մտնեն էլեկտրոնային համակարգերի ներդնումից հետո միայն[32]:

Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև քննչական մարմիններին, որոնց համար նոր օրենսգրքերի ընդունմամբ պայմանավորված անհրաժեշտ է սահմանել նախադրյալներ՝ ապահովելու վարույթի արդյունավետությանը միտված նրանց մասնագիտական որակները և կարողությունները:

---

[31] Տե՛ս CEPEJ, Guidelines on electronic court filing (e-filing) and digitalisation of courts, 2021

[32] OPINION ON THE DRAFT JUDICIAL AND LEGAL REFORMS STRATEGY FOR 2022-2026 OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE ACTION PLAN DERIVING THEREFROM (PRELIMINARY ASSESSMENT), European Union and Council of Europe Partnership for Good Governance 2019-2022, Project "Support to the judicial reform – enhancing the independence and professionalism of the judiciary in Armenia", 21 May 2022

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի պրակտիկ կիրառման ապահովում

Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մայիսի 5-ին և 2021 թվականի հունիսի 30-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են համապատասխանաբար քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերը: Օրենսգրքերի կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ աշխատանքներն իրականացվում են մի քանի ուղղություններով՝ օրենսգրքերը կիրառող մարմինների նյութատեխնիկական և անհրաժեշտ հաստիքային միավորներով ապահովում, հարակից օրենքների ներդաշնակեցում, որը նախատեսված է նշված օրենսգրքերի կիրարկման ցանկերում, իրավապահ մարմինների իրազեկում: Հաշվի առնելով սույն ռազմավարության էությունն ու թիրախները՝ անհրաժեշտ է ռազմավարական մակարդակում հստակեցնել ճանապարհային այն քարտեզը, որը միտված է լինելու երկու նոր օրենսգրքերի սահուն իմպլեմենտացիայի ապահովմանը:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում կարողությունների հզորացում

Արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները տարիներ շարունակ կենտրոնացված են եղել առավելապես դատական ոլորտի վրա, մինչդեռ քրեական արդարադատության շղթայի մաս կազմող այլ սուբյեկտները ևս անմասն չպետք է մնան բարեփոխումների համալիրից: Այս շղթայի մեջ իրենց ուրույն տեղն ունեն քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունները, որոնց զարգացումն ուղղակիորեն ազդում է արդարադատության ողջ համակարգի բարելավման վրա:

Մասնավորապես՝ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, հատկապես հայեցակարգային առումով նոր քրեակատարողական հիմնարկի ձևավորման համատեքստում, և Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունը անհրաժեշտ է համալրել պրոֆեսիոնալ և բարեվարք կադրերով՝ գործնականում վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությունները ամրապնդելու նպատակով: Որակյալ կադրերի պատրաստումը կարող է իրականացվել Պարեկային ծառայության օրինակով՝ տեսական և գործնական գիտելիքների համատեղման նմանատիպ մեթոդների կիրառմամբ: Բացի այդ, քրեակատարողական ծառայողների հաշվետու և թափանցիկ գործելաոճն ապահովելու, կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով՝ անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկներն ապահովել արդի տեսահսկման և օպերատիվ կառավարման գործիքակազմերով, ինչը նաև հնարավորություն կտա հետագայում հնարավոր վարույթների շրջանակներում որպես ապացույց օգտագործել նշված գործիքակազմերի միջոցով ձեռք բերված տվյալները:

Սույն ռազմավարության շրջանակներում առանձնացվել են այն միջոցառումները, որոնք կարևորվում են դատական բարեփոխումների շարունակականությունը ապահովելու տեսանկյունից, իսկ այլ բարեփոխումները նախատեսված են նեղ ոլորտային ռազմավարությամբ:

Քննչական մարմինների համակարգի բարեփոխում

Արդարադատության համակարգի առողջացման նպատակով կարևոր է ապահովել, որ քննչական մարմիններն իրենց կառուցվածքով, գործունեության սկզբունքներով և մասնագիտական ներուժով համապատասխանեն արդարադատության նոր հայեցակարգի տեսլականին: Այս համատեքստում հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը արդեն իսկ մի շարք օրենսդրական բարեփոխումների իրականացման արդյունքում ներդրել է բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր դատական, դատախազական համակարգերում, սույն գործընթացի կազմակերպման համար նախատեսվել է իրավասու մարմին, որը օժտվել է համապատասխան գործիքակազմով: Նշված կառուցակարգերը գործարկվել են նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների համար: Սակայն հարկ է ապահովել նշված բարեփոխումների շարունակականությունը՝ դրանք տարածելով նաև իրավապահ համակարգի մյուս մարմինների վրա, այսպիսով ապահովելով նշված համակարգերում բարեվարք կադրերի ներգրավումը: Բացի այդ, իրավապահ համակարգում բարձր պրոֆեսիոնալիզմ ապահովելու նպատակով անհրաժեշտ է հետևողական լինել կարողությունների զարգացման հարցում՝ պարբերաբար իրականացնելով անձնակազմի վերապատրաստումներ:

Նշվածով պայմանավորված՝ քննչական մարմինների համակարգի բարեփոխման նպատակով անհրաժեշտ է՝

ա) նախատեսել քննիչների թեկնածուների և առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց բարեվարքության ստուգման կառուցակարգեր.

բ) զարգացնել քննիչների, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կարողությունները՝ կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում.

գ) նախատեսել քննիչների բարեվարքության շարունակական ստուգման կառուցակարգեր (գույքային դրություն, անհամատեղելիության պահանջների պահպանվածություն, շահերի բախման իրավիճակներ և այլ սահմանափակումներ):

Ինչպես դատական իշխանության պարագայում, քննչական մարմինների դեպքում ևս կարևոր է բարեվարք կադրերով համալրվածությունը: Հարկ է նշել, որ ներկայումս բարեվարքության ստուգման կառուցակարգեր սահմանված են միայն Հակակոռուպցիոն կոմիտեի պարագայում: Սակայն կարևորելով պետության զարգացման գործում կայացած, բարեվարք, կոռուպցիայից զերծ իրավապահ համակարգի առկայությունը՝

քննչական մարմիններում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված քայլերը պետք է կրեն պարբերական բնույթ: Այս համատեքստում ևս կարևոր է քննիչների բարեվարքության ինչպես նախնական, այնպես էլ ընթացիկ ստուգման իրականացումը, որը ինչպես և դատավորների դեպքում հնարավորություն կստեղծի ստուգել քննիչների բարեվարքությունը պաշտոնը ստանձնելու և առաջխաղացման փուլերում (նախնական ստուգում), իսկ հետագայում իրականացնել ընթացիկ ստուգում: Բարեվարքության ընթացիկ ստուգման ընթացքում կիրականացվի գույքային դրության, անհամատեղելիության պահանջների պահպանվածության, շահերի բախման իրավիճակների, այլ սահմանափակումների և օրենքով նախատեսված այլ պահանջների և տեղեկատվության ստուգում, ինչն էլ կապահովի գործող քննիչների բարեվարքության շարունակական գնահատումը:

Դատախազների բարեվարքության ամրապնդում

Դատախազական համակարգի բարեփոխման նպատակով անհրաժեշտ է իրականացնել դատախազների բարեվարքության պարբերական գնահատում:

Ներկայումս Կառավարության առջև ծառացած հիմնական խնդիրներից է նաև բարեվարք, կոռուպցիայից զերծ դատախազական համակարգի ձևավորումը: Առկա կարգավորումները դատախազների բարեվարքության ստուգման սահմանափակ հնարավորություններ են տալիս և միայն պաշտոնի նշանակման կամ առաջխաղացման փուլում:

Մինչդեռ կարևոր է ապահովել դատախազների բարեվարքությունը նրանց գործունեության ողջ ընթացքում, ինչը հնարավոր է երաշխավորել միայն որոշակի պարբերականությամբ իրականացվող ստուգումների միջոցով, երբ կիրականացվի նրանց գույքային դրության, անհամատեղելիության պահանջների պահպանվածության, շահերի բախման իրավիճակների, այլ սահմանափակումների և օրենքով նախատեսված այլ պահանջների և տեղեկատվության ստուգում:

Դատախազների բարեվարքության շարունակական ստուգման նշված կառուցակարգը կնպաստի բարեվարք, կոռուպցիայից զերծ դատախազական համակարգի ձևավորմանը: Նման պայմաններում արդեն իսկ իրականացված բարեփոխումները կամբողջականացվեն՝ ապահովելով դատախազական համակարգում բարեվարք կադրերի առկայությունը, որոնք իրենց գործունեությունը կիրականացնեն առավելապես անկաշկանդ և զերծ կլինեն մասնավոր շահերի ազդեցությունից:

Արդյունքում դատախազների դեպքում ևս, ինչպես քննիչների և դատավորների պարագայում, կձևավորվի բարեվարքության ստուգման «երկաստիճան» համակարգ. բարեվարքության նախնական ստուգում, որն իրականացվում է պաշտոնը ստանձնելու փուլում կամ առաջխաղացման դեպքում, և ընթացիկ ստուգում, որն իրականացվելու է որոշակի պարբերականությամբ՝ վերը բացահայտված բովանդակությամբ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության ներկայիս քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է 1998թ. մայիսի 5-ի Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մոդելային օրենսգրքի հիման վրա: Սակայն, ուղղված լինելով մասնավոր իրավահարաբերությունների կարգավորմանը՝ Քաղաքացիական օրենսգրքի կարգավորումները պարբերաբար և շարունակական վերանայման և բարելավման կարիք ունեն, ինչը պետք է նպատակ հետապնդի դրանք համապատասխանեցնել ժամանակակից տնտեսական կարգից բխող պայմաններին, շուկայի պահանջներին, տեխնոլոգիական զարգացումներին, և, իհարկե, միջազգային իրավական զարգացումներին: Նշված համատեքստում օրենսգրքի ընդունումից ի վեր դրանում ի հայտ են եկել կարգավորման տարբեր խնդիրներ, առանձին իրավական ինստիտուտների վերանայման կարիքներ և տարաբնույթ անճշտություններ:

Քաղաքացիական դատավարության ոլորտում իրավական բարեփոխումները մեծապես կյանքի են կոչվել 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի շրջանակներում: Այնուամենայնիվ, իրավական կարգավորման խնդիրները, հատկապես նոր ներդրված կարգավորումների և ինստիտուտների համատեքստում, մեծապես ի հայտ են գալիս դրանց կիրառման արդյունքում: Նշված հանգամանքներից է բխում Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում ծագած խնդիրների վերհանման և գույքագրման անհրաժեշտությունը, որը կարող է հիմք ծառայել Քաղաքացիական դատավարության օրենսգրքում իրավակիրառ պրակտիկայի կարիքներից բխող անհրաժեշտ փոփոխությունների կատարման համար: Միևնույն ժամանակ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումները փոփոխելու անհրաժեշտություն է առաջանում էլեկտրոնային արդարադատության գործիքակազմի ներդրման արդյունքում և դրա ուղղությամբ տարվող աշխատանքներին զուգահեռ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիական օրենսդրության բարեփոխում

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտություն է առաջանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և հարակից օրենսդրության առանձին կարգավորումներ կամ ինստիտուտներ համապատասխանեցնել տնտեսական հարաբերությունների և մասնավոր իրավահարաբերությունների կարգավորման ժամանակակից մոտեցումներին, շուկայի արդի պահանջներին: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. կարիք կա ուսումնասիրելու և վերանայելու պայմանագրային իրավունքի որոշ կարգավորումներ: Մասնավորապես, տնտեսական հարաբերությունների և դրանց գործունեության միջավայրի զարգացման, հատկապես, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման աճի պայմաններում անհրաժեշտ է նախատեսել էլեկտրոնային եղանակով կնքվող պայմանագրերի վերաբերյալ ժամանակակից կարգավորումներ, որոնք կապահովեն մասնավոր իրավահարաբերությունների պատշաճ կարգավորումը, գործարար միջավայրի զարգացումը, ինչպես նաև անձանց իրավունքների և շահերի պաշտպանվածությունը նշված զարգացումների համատեքստում: Այս առումով անհրաժեշտ է նաև վերանայել պայմանագրերի օրինակելի պայմանների կամ, ինչպես ավելի ընդունված է անվանել, ընդհանուր պայմանների վերաբերյալ իրավակարգավորումները՝ համապատասխանեցնելով դրանք իրավունքի միջազգային զարգացումներին և մոտեցումներին, այդ թվում՝ նախատեսելով կանոններ էլեկտրոնային միջավայրում այդպիսի կարգավորումների նախատեսման և կնքման առնչությամբ, ինչը բավականին տարածված երևույթ է տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Պայմանագրային հարաբերությունների նշված ուղղությունների բարելավմանը զուգահեռ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև սպառողների իրավունքների պաշտպանության գործիքների ներդրմանը, ինչը կապահովի նախատեսվող կարգավորումների պարագայում սպառողների իրավունքների պատշաճ պաշտպանվածությունը, ինչպես նաև բխում է ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրից: Այս համատեքստում, անհրաժեշտ է վերանայել միանալու պայմանագրերի վերաբերյալ դրույթները, նախատեսել սպառողների հետ կնքվող պայմանագրերում անարդար պայմանների նախատեսման և դրանց իրավական հետևանքների վերաբերյալ կարգավորումներ.

2. պարտավորությունների կատարման ապահովման իրավական կարգավորումները և դրանցում համապատասխան փոփոխությունների կատարումը նույնպես կարիք ունեն ուսումնասիրության և ըստ անհրաժեշտության՝ վերանայման: Նշվածի հաշվառմամբ հատկապես կարևորվում է 2014 թ.-ին ներդրված ապահովված

իրավունքի ինստիտուտի վերանայումը, մասնավորապես, դրա և գրավի ինստիտուտների հարաբերակցության տեսանկյունից, ինչը, ինքնին, ազդում է ապահովված իրավունքի կիրառման արդյունավետության վրա, և բնականաբար իրավական միջազգային զարգացումների համատեքստում տեղի ունեցած փոփոխությունների լույսի ներքո.

3. ժամանակակից շուկայի կարևոր պահանջներից է նաև կորպորատիվ իրավահարաբերությունների շարունակական զարգացումը: Այս առումով, 2021 թ. մայիսին մեծածավալ փոփոխություններ կատարվեցին «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում: Սակայն, նշվածի հաշվառմամբ անհրաժեշտություն է վերանայել կազմակերպաիրավական այլ ձևերի գործունեությունը կարգավորող իրավական դաշտը և նախատեսել առևտրային կազմակերպությունների իրավահարաբերությունները կարգավորող համապարփակ օրենսդրություն, որը կպարունակի կորպորատիվ կառավարման ժամանակակից լուծումներ, կնպաստի կապիտալ շուկայի զարգացմանը և ընդհանուր առմամբ ողջ կորպորատիվ միջավայրը կդարձնի ներդրողների համար առավել գրավիչ.

4. անհրաժեշտ է վերանայել գնումների մասին օրենսդրության և քաղաքացիական իրավունքի հարաբերակցության հարցը: Այս առումով խնդրահարույց է այն, որ գնումների վերաբերյալ օրենսդրությունը ձևավորված չէ Քաղաքացիական օրենսգրքի՝ պետական կարիքների համար մատակարարման պայմանագրի համապատասխան նորմերի հիմքի վրա:

Քաղաքացիական դատավարության օրենսդրության վերանայում

2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործնականում կիրառման արդյունքում արձանագրվել են տարբեր խնդիրները, որոնք անհրաժեշտ է վեր հանել և գույքագրել: Աջակցություն դատական բարեփոխումներին «Հայաստանում դատական իշխանության անկախության և պրոֆեսիոնալիզմի բարձրացում» ծրագրի շրջանակներում «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի որոշ դրույթների՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մասին» պատրաստված կարծիքում նույնպես նշվել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին[33]: Նման խնդիրների վերհանումը և գույքագրումը հնարավորություն կտա հետագայում մշակել դրանց լուծմանն ուղղված իրավական ակտերի նախագծեր: Հատկապես անհրաժեշտ

[33] Տե՛ս Աջակցություն դատական բարեփոխումներին «Հայաստանում դատական իշխանության անկախության և պրոֆեսիոնալիզմի բարձրացում» ծրագրի շրջանակներում «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի որոշ դրույթների՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մասին» պատրաստված կարծիքը:

է ուշադրություն դարձնել դատական պրակտիկայում բարձրաձայնված, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի բնույթով նոր իրավակարգավորումների և ինստիտուտների բացահայտված խնդիրներին:

Այնուհետև, կատարված ուսումնասիրությունների և գույքագրման ադյունքների հիման վրա անհրաժեշտ կլինի մշակել Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող փաթեթ, որը կարտացոլի վերհանված հիմնական խնդիրների համապարփակ լուծումները:

Միևնույն ժամանակ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխությունների միջոցով անհրաժեշտ է անդրադառնալ էլեկտրոնային արդարադատության ներդրմամբ պայմանավորված իրավական կարգավորման անհրաժեշտությանը: Էլեկտրոնային արդարադատության համակարգերի ներդնմանը զուգահեռ իրավական դաշտի համապատասխանեցումը և նախապատրաստումը բխում են նաև այս ոլորտում սահմանված Եվրոպայի խորհրդի չափանիշներից. օրինակ՝ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից մշակված ուղեցույցի համաձայն՝ էլեկտրոնային արդարադատության վերաբերյալ օրենսդրությունը անհրաժեշտ նախապայման է դատական ընթացակարգերի հաջող թվայնացման համար[34]: Իր հերթին, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, նույնպես ընդգծելով նախօրոք օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, նշել է նաև, որ դրանք պետք է ուժի մեջ մտնեն էլեկտրոնային համակարգերի ներդնումից հետո միայն[35]:

Այս համատեքստում հնարավոր կլինի քաղաքացիական դատավարության գործընթացում ներգրավված անձանց համար ապահովել արդարադատության մատչելիության և արդյունավետության ավելի բարձր մակարդակ: Առաջարկվող լուծումները, ի թիվս այլնի, պետք է նախատեսեն.

1. էլեկտրոնային ծանուցումների վերաբերյալ առավել արդյունավետ կարգավորումներ՝ հաշվի առնելով, որ էլեկտրոնային եղանակով դատական ծանուցումների իրականացումը դատավարության արդյունավետության և սեղմ ժամկետներում գործի քննության ապահովման կարևորագույն նախադրյալներից է.

2. էլեկտրոնային փաստաթղթերի և տվյալների, այդ թվում՝ դատավարական փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով ներկայացման վերաբերյալ կարգավորումներ: Մասնավորապես, ներկայումս Քաղաքացիական

---

[34] Տե՛ս CEPEJ, Guidelines on electronic court filing (e-filing) and digitalisation of courts, 2021:

[35] Տե՛ս OPINION ON THE DRAFT JUDICIAL AND LEGAL REFORMS STRATEGY FOR 2022-2026 OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE ACTION PLAN DERIVING THEREFROM (PRELIMINARY ASSESSMENT), European Union and Council of Europe Partnership for Good Governance 2019-2022, Project "Support to the judicial reform – enhancing the independence and professionalism of the judiciary in Armenia", 21 May 2022:

դատավարության օրենսգրքով նախատեսված է դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, հայցադիմումի պատասխան, միջնորդություն և այլն) էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորություն, սակայն անհրաժեշտ է մանրամասնել դրանց ներկայացման, կիրառման, օգտագործման, պահպանման կարգը՝ էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը զուգահեռ.

3. էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ կարգավորումներ՝ հաշվի առնելով դրանց ձեռքբերման հնարավորությունների և ամրագրման տեխնիկական միջոցների շրջանակի ընդլայնումը և դրանց՝ դատական պրակտիկայում կիրառման դեպքերի աճը.

4. էլեկտրոնային գործիքների կիրառմամբ պարզեցված վարույթների իրականացմանն ուղղված կարգավորումներ, ինչն էապես կնպաստի այս վարույթների արդյունավետության բարձրացմանը:

Միևնույն ժամանակ, հարկ է վերանայել նաև քաղաքացիական և վարչական գործերով բերվող վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարանի կողմից վերադարձնելու ինստիտուտը: Մասնավորապես, անհրաժեշտ է առանձնացնել այն դեպքերը, երբ գործ ունենք բողոքին ներկայացվող պահանջների ակնհայտ տեխնիկական բնույթի խախտումների հետ և դրանց հիման վրա բողոքները վերադարձնելու գործառույթը վերապահել Վճռաբեկ դատարանի գրասենյակին՝ դրանով իսկ համապատասխան պալատի դատական կազմին չծանրաբեռնելով բողոքը վերադարձնելու մասին ակտ կայացնելու խնդրով: Ընդ որում, անհրաժեշտ է լինելու նախատեսել այնպիսի ընթացակարգ, որը չի բացառի բողոքի վերադարձի հետ անհամաձայնության դեպքում այն Վճռաբեկ դատարանին կրկին ներկայացնելու հնարավորությունը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի վերադարձման հիմքով ևս ընդգծվում է վճռաբեկ բողոքի քննության ողջամիտ ժամկետի երաշխավորման անհնարինությունը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վարչական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում թերևս, «ամենաերիտասարդ» իրավական ինստիտուտներից է: Իրավունքի այս ճյուղի օրենսդրորեն առանձնացման և հատուկ կարգավորման ավելի քան 14 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունվել են վարչական դատավարության երկու օրենսգրքեր: Ընդ որում, նշված տարիների ընթացքում վարչական դատավարության իրավակարգավորումները պարբերաբար փոփոխվել և զարգացվել են ինչպես իրավակիրառ գործունեության ընթացքում բացահայտված խնդիրների, այնպես էլ հասարակական հարաբերությունների զարգացմամբ ի հայտ եկած անհրաժեշտությունների հիման վրա: Վերջին հիմնական փոփոխությունները՝ ուղղված վարչական արդարադատության արդյունավետության բարձրացմանը, 2020-2021 թվականների ընթացքում ընդունված Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքներն էին, որոնք հիմնականում ուղղված էին Վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանը և նոր իրավական իրողություններով պայմանավորված նոր ընթացակարգերի սահմանմանը՝ նախատեսելով գործերի գրավոր ընթացակարգերով քննության կառուցակարգեր, վիճարկման դեպքում վարչական ակտերի կասեցման չհանգեցնող նոր հիմքեր և կարգավորելով վարույթային այլ առանձնահատկություններ:

Այդուհանդերձ, հասարակական հարաբերությունների, դրանով պայմանավորված՝ նյութական իրավունքի զարգացման, իրավակիրառ գործունեության ընթացքում վեր հանվող խնդրահարույց իրավիճակների և բացերի, ինչպես նաև շարունակական ի հայտ եկող այլ կարիքների բացահայտման արդյունքում վարչական դատավարության հիմնաքարային որոշ ինստիտուտներ դեռևս կարիք ունեն շարունակական վերանայման և բարելավման, իսկ պրակտիկայում ի հայտ եկած տարբեր խնդիրները՝ լուծման: Օրինակ՝ վերանայման անհրաժեշտություն է առկա վարչական դատավարությունում ծանուցման եղանակների և կարգի, հայցի ապահովման, վարչական դատավարությունում վերաքննության առանձնահատկությունների և այլ հարցերի առնչությամբ: Միևնույն ժամանակ, վարչական դատարանների ծանրաբեռնվածությունը

թեթևացնելու համար ևս կարևոր նշանակություն ունի նաև առանձին տեսակի վարչական գործերի համար պարզեցված վարույթների ներդրման և պարզեցված վարույթների իրականացման հարցում էլեկտրոնային գործիքների կիրառման անհրաժեշտությունը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի էլեկտրոնային արդարադատության գործիքների համալիր ներդնումը, ինչի արդյունքում առաջ է գալու օրենսդրության համապարփակ վերանայման և ներդրվելիք համակարգերին դրա հնարավորինս հարմարեցման անհրաժեշտություն: Էլեկտրոնային արդարադատության համակարգերի ներդնմանը զուգահեռ իրավական դաշտի համապատասխանեցումը և նախապատրաստումը բխում են նաև այս ոլորտում սահմանված Եվրոպայի խորհրդի չափանիշներից. օրինակ՝ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից մշակված ուղեցույցի համաձայն՝ էլեկտրոնային արդարադատության վերաբերյալ օրենսդրությունը անհրաժեշտ նախապայման է դատական ընթացակարգերի հաջող թվայնացման համար[36]: Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, նույնպես ընդգծելով նախօրոք օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, նշել է նաև, որ դրանք պետք է ուժի մեջ մտնեն էլեկտրոնային համակարգերի ներդնումից հետո միայն[37]: Իր հերթին, անհրաժեշտ է ուսումնասիրության և քննարկման առարկա դարձնել նաև վարչական դատարանին ենթակա վեճերի այլընտրանքային լուծման եղանակների նախատեսման իրավական հնարավորության և դրա օբյեկտիվ անհրաժեշտության հարցը:

Այսպիսով, իրավակիրառ պրակտիկայում ծագած և վերհանված խնդիրների, ինչպես նաև էլեկտրոնային արդարադատության ներդնման կարիքների հիման վրա անհրաժեշտ է փոփոխություններ կատարել վարչադատավարական հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերում՝ համապատասխան ստորև առաջարկվող ռազմավարական ուղղությունների:

Միևնույն ժամանակ, Հայաստանում դեռևս որոշակի փոփոխություններով գործում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1986թ.-ի օրենսգիրքը: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ դրանում կատարվող փոփոխությունները մշտապես կրել են ոչ թե համալիր և համապարփակ, այլ հատվածական բնույթ, ինչի արդյունքում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության շրջանակներում առաջացել են բազմաթիվ անհամապատասխանություններ, խնդիրներ և կարգավորման բացեր, իսկ բազում կարգավորումներ այլևս արդիական չեն: Արդյունքում օբյեկտիվորեն առաջ է գալիս Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի լիարժեք վերանայման և փոփոխման անհրաժեշտություն, այլ կերպ՝ նոր օրենսգրքի մշակում, որը ոչ միայն

[36] Տե՛ս CEPEJ, Guidelines on electronic court filing (e-filing) and digitalisation of courts, 2021:
[37] Տե՛ս CCJE. 2011. Opinion No.(2011)14 of the CCJE "Justice and information technologies (IT)":

կապահովի նշված խնդիրների լուծումը, այլև կապահովի վարչական իրավախախտումների օրենսդրության պատշաճ կոդիֆիկացիան:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարչական դատավարության օրենսդրության վերանայում

Վարչական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2014 թվականին, որից հետո դրա կիրառման պրակտիկայում բացահայտվել են բազմաթիվ օրենսդրական բացեր, որոնցից որոշները իրենց լուծումն են ստացել միայն Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների մակարդակում, որոշ կարգավորումներ ճանաչվել են հակասահմանադրական, իսկ որոշ կարգավորումներ էլ չեն համապատասխանում հասարակական հարաբերությունների զարգացման ներկայիս միտումներին կամ այլևս արդյունավետ չեն:

Այսպես, Վարչական դատավարությունում ծանուցումների գործող համակարգի պարագայում դատարանը պարտավոր է յուրաքանչյուր գործով յուրաքանչյուր դատավարական գործողության մասին հիմնականում փոստի միջոցով ծանուցել դատավարության մասնակցին: Ընդ որում, որևէ տարբերակում չի դրվում, թե դատավարության մասնակիցը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, փաստաբան է, թե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Բոլոր դեպքերում, դատարանը փաստացի մեծ չափերի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ է ծախսում օրենսդրական գործող պահանջը բավարարելու համար (օրինակ՝ միայն Երևանում այն անցնում է 400 միլիոն դրամից):

Հարկ է նկատել, օրինակ, որ Քաղաքացիական դատավարության 2018թ.-ի օրենսգրքով նախատեսված դատական ծանուցումների համակարգը զգալիորեն նվազեցրել է դատարանների ծանրաբեռնվածությունը և ծախսվող միջոցների չափը, մասնավորապես պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ, ինչպես նաև գործին մասնակցող անձի՝ փաստաբանի կարգավիճակ ունեցող ներկայացուցչի կողմից առաջին դատական ծանուցագիրը ստանալու պահից, նրանք հերթական դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ ծանուցվում են դատական իշխանության պաշտոնական կայքում համապատասխան տեղեկությունները տեղադրելու միջոցով:

Հետևաբար, անհրաժեշտ է նմանատիպ կարգավորումներ նախատեսել նաև վարչական դատավարությունում:

Միևնույն ժամանակ, Վարչական դատավարության շրջանակներում նախատեսված են բազում հատուկ վարույթներ, որոնց նախատեսման նպատակահարմարությունը, անհրաժեշտությունը կարիք ունեն քննարկման և, ըստ անհրաժեշտության, վերանայման: Մասնավորապես, Վարչական դատավարության հատուկ վարույթների շարքին է դասվել դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու

վերաբերյալ գործերի վարույթը, որը, ըստ էության, վարչական մարմնի գործառույթ է, ինչով պայմանավորված անհրաժեշտ է քննարկել ընդհանրապես դրա նախատեսման անհրաժեշտությունը:

Իր հերթին, ներկայումս Վարչական դատավարության օրենսգրքում առանձնացվել են վարույթներ, որոնց հատուկ վարույթի կարգով քննելու անհրաժեշտությունը նույնպես հիմնավորված չէ: Մասնավորապես, հասարակական կազմակերպությունների ներկայացրած հայցերով, լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ, ըստ էության, ներկայացվում են վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակներ, ինչով պայմանավորված գործի քննության էական առանձնահատկություն այս գործերով անհրաժեշտ չէ կիրառել: Միաժամանակ, այս գործերով առկա են հակադիր շահերով օժտված կողմեր և նյութահիրավական պահանջներ, ինչով պայմանավորված կարող է առաջանալ դրանք ընդհանրապես որպես հատուկ վարույթ դիտարկելու իրավական նպատակահարմարության հարցը:

Հետևաբար, անհրաժեշտ է դիտարկել վարչական դատավարությունում նախատեսված հատուկ վարույթների իրավական կառուցակարգերը և դրանց վերանայման անհրաժեշտությունը:

Իր հերթին, Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ վարչական դատարանին ընդդատյա չեն, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը: Այդուհանդերձ, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանը 22.01.2019թ.-ի թիվ ՍԴՈ-1439 որոշմամբ արձանագրել է, որ մինչև Ազգային ժողովի կողմից այդ որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության Վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին:

Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել նման գործերի քննության ընթացակարգային առանձնահատկությունները:

Հետևաբար՝ անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության դեմ բողոքների ենթակայության և գործի քննության ընթացակարգի օրենսդրական հստակեցում:

Հարկ է վերանայել նաև վարչական գործերով բերվող վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարանի կողմից վերադարձնելու ինստիտուտը: Մասնավորապես, անհրաժեշտ է առանձնացնել այն դեպքերը, երբ գործ ունենք բողոքին ներկայացվող պահանջների ակնհայտ տեխնիկական բնույթի խախտումների հետ և դրանց հիման վրա բողոքները վերադարձնելու գործառույթը վերապահել Վճռաբեկ դատարանի գրասենյակին՝ դրանով իսկ համապատասխան պալատի դատական կազմին չծանրաբեռնելով բողոքը վերադարձնելու մասին ակտ կայացնելու խնդրով: Ընդ որում, անհրաժեշտ է նախատեսել այնպիսի ընթացակարգ, որը չի բացառի բողոքի վերադարձի հետ անհամաձայնության դեպքում այն Վճռաբեկ դատարանին կրկին ներկայացնելու հնարավորությունը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի վերադարձման հիմքով ևս ընդգծվում է վճռաբեկ բողոքի քննության ողջամիտ ժամկետի երաշխավորման անհնարինությունը:

Նկատենք, նաև, որ վարչական վարույթի շրջանակներում վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարույթի նյութերը տրամադրելիս ապահովում է պետական և ծառայողական գաղտնիքի, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիքների, այդ թվում՝ առևտրային գաղտնիքի պահպանությունը: Մինչդեռ, հարկ է նկատել, որ նման տեղեկությունները դատական քննության շրջանակում հասանելի են դառնում դատավարական գործի բոլոր մասնակիցներին, այդպիսով հակասելով նման տեղեկությունների՝ գաղտնի պահպանման տրամաբանությանը: Հետևաբար, անհրաժեշտ է նախատեսել իրավական կառուցակարգեր նշված տեղեկատվության գաղտնիությունը վարչական դատավարության շրջանակներում պահպանելու համար:

Կարևոր է ընդգծել նաև վերջին շրջանում, հատկապես, կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված դատական նիստերին տեսաձայնային կապի միջոցներով մասնակցելու հարցի առավել մեծ կարևորությունը: Այս առումով, վարչական դատավարության օրենսգրքով թեև նախատեսված է դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառման հնարավորություն, սակայն, ի տարբերություն քաղաքացիական դատավարության օրենսգրքի, այն մանրամասն կարգավորված չէ: Ուստի, անհրաժեշտ է օրենսդրորեն անդրադառնալ նաև վարչական դատավարության շրջանակներում հեռավար եղանակով նիստերի անցկացման հնարավորությանը:

Այնուհետև նկատենք, որ Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1565 որոշմամբ արձանագրվել է, որ Վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը, սահմանափակելով վարչական մարմնի՝ վարչական գործի դատական քննության ընթացքում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը, չպետք է սահմանափակի անձանց՝ գործի արդարացի լուծման համար նշանակություն ունեցող նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը:

Նման մեկնաբանության պայմաններում դատավարության մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են չարաշահել դատական քննության ընթացքում նոր ապացույցներ ներկայացնելու իրավունքը: Նշվածով պայմանավորված անհրաժեշտ է օրենսդրորեն բացառել նման չարաշահումների դեպքերը ևս:

Իր հերթին, նկատենք, որ վարչական վերքաննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում: Սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ առկա են դատական ակտի անվերապահ բեկանման հիմքեր, որոնց բողոքաբերը բողոքում չի անդրադարձել: Մինչդեռ, դատական ակտի անվերապահ բեկանման որոշ հիմքերի առկայության դեպքում դատական ակտի վերանայումն անհնար է դառնում: Ընդ որում անվերապահ բեկանման ինստիտուտը գործում է քաղաքացիական դատավարության շրջանակներում՝ ապահովելով պատշաճ արդարադատության իրականացումը: ՈՒստի, անհրաժեշտ է նման հիմքեր նախատեսել նաև վարչական դատավարության շրջանակներում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության բարեփոխում

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է դեռևս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1985 թ. դեկտեմբերի 6-ին ընդունված և 1986 թ. հունիսի 6-ին կիրառության մեջ դրված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը:

Օրենսգիրքն իր հիմքում դրված հայեցակարգային տրամաբանությամբ և փիլիսոփայությամբ, համակարգային կառուցվածքով և տասնյակ այլ օրենքների հետ ունեցած անլուծելի հակասություններով, տասնամյակների ընթացքում կատարված բազում հաջողված և անհաջող փոփոխություններով, հնացած կամ գործնական կիրառում չունեցող բազմաթիվ դրույթներով, թերի և ոչ լիարժեք վարչական պատասխանատվության միջոցներով ունակ չէ լուծել իր առջև դրված խնդիրները և ներկայիս խմբագրությամբ չի համապատասխանում իրավական պետության պահանջներին:

Ավելին, վերջին տարիներին մշակվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ, որն ընդունելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել:

Հաշվի առնելով այն, որ վարչական իրավախախտումների ոլորտում խնդիրները բավականաչափ ծավալուն են և համակարգային՝ անհրաժեշտ է ընդունել վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգիրք, որը կհանդիսանա վարչական իրավախախտումների ոլորտն իրավական կանոնակարգման ենթարկող արդի և գործնականում առաջացող իրավական խնդիրներին արձագանքելուն ունակ իրավական փաստաթուղթ, որը կապահովի նաև վարչական իրավունքի այս ուղղության զարգացմանն ու բարելավմանը:

Միևնույն ժամանակ, գործող կարգավորումները, ըստ էության, չեն արտացոլում վարչական ներգործության նպատակները: Վարչական տույժը պետք է կիրառվի անձի մոտ իրավաչափ վարքագիծ ձևավորելու և նոր վարչական իրավախախտումների կատարումը կանխելու նպատակներով, մինչդեռ, շատ հաճախ սահմանված տույժերի կիրառմամբ չի ապահովվում վարչական տույժի նպատակների իրացումը:

Բացի այդ, վարչական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից: Ըստ այդմ, օրենսդրից ակնկալվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորումներ, որոնք պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն կընձեռեն որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից և լրջությունից: Ըստ այդմ, համաչափության սկզբունքի տեսանկյունից ևս անհրաժեշտ է վերանայել վարչական տույժերը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ինչպես գործարար միջավայրի, այնպես էլ արդարադատության համակարգի շարունակական զարգացման տեսանկյունից կարևորվում է նաև սնանկության ոլորտի շարունակական բարեփոխման անհրաժեշտությունը՝ արդի միտումներին և զարգացող տնտեսական հարաբերություններին համահունչ: Սնանկության ոլորտում բարեփոխումները պետք է միտված լինեն դրա համապատասխանեցմանը ժամանակակից պահանջներին, ինչպես նաև ոլորտում կատարված փոփոխությունների հիման վրա իրավակիրառ պրակտիկայում ծագած և վերհանված նոր խնդիրների լուծմանը:

Այս համատեքստում Կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրի[38], ինչպես նաև Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարության շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ Ազգային ժողովի կողմից արդեն իսկ ընդունվել են «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքները, դրանց հիման վրա անհրաժեշտ ենթաօրենսդրական իրավական ակտերը: Ուստի, սնանկության ոլորտի օրենսդրության բարելավումը նպատակ է հետապնդելու կարգավորել այն խնդիրները, որոնք չեն լուծվել արդեն իսկ կատարված բարեփոխումներով կամ որոնց անհրաժեշտությունը բացահայտվել է այդ փոփոխությունների կիրառման շրջանակներում, այդ թվում՝ սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները մեկ միասնական ակտով կարգավորելու կարևորության հաշվառմամբ:

Միևնույն ժամանակ, ներկայումս մշակվող և փուլ առ փուլ ներդրվող էլեկտրոնային արդարադատության, այդ թվում՝ էլեկտրոնային սնանկության համակարգի ներդրումը պահանջելու է նաև դրան համապատասխան օրենսդրության առկայություն, որը հնարավորություն կտա սնանկության վարույթը՝ սկսած դրա հարուցումից մինչև վարույթի ավարտը, հնարավորինս իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ առանց լրացուցիչ փաստաթղթաշրջանառության՝ առավելագունս բացառելով մարդկային միջամտությունը և գործընթացներն իրականացնելով առանց կողմերի անմիջական մասնակցության: Էլեկտրոնային արդարադատության համակարգերի ներդրմանը զուգահեռ իրավական դաշտի համապատասխանեցումը և նախապատրաստումը բխում են նաև այս ոլորտում սահմանված Եվրոպայի խորհրդի չափանիշներից. օրինակ՝ Արդարադատության արդյունավետության

[38] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287 հղումով:

եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից մշակված ուղեցույցի համաձայն՝ էլեկտրոնային արդարադատության վերաբերյալ օրենսդրությունը անհրաժեշտ նախապայման է դատական ընթացակարգերի հաջող թվայնացման համար[39]: Իր հերթին, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, նույնպես ընդգծելով նախօրոք օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, նշել է նաև, որ դրանք պետք է ուժի մեջ մտնեն էլեկտրոնային համակարգերի ներդնումից հետո միայն[40]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սնանկության ոլորտի բարեփոխումների շրջանակներում սույն ռազմավարությամբ նախանշվել են մի շարք ուղղություններ, որոնք կապահովեն արդեն իսկ մեկնարկած բարեփոխումների շարունակականությունը և ոլորտի հետագա զարգացումը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Սնանկության ունիվերսալ օրենսդրության մշակում

Սնանկության վարույթին առնչվող բոլոր հարցերը միատեսակ չափանիշներով և սկզբունքներով կարգավորելու կարևորությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել համակարգային, համապարփակ և լիարժեք օրենսդրություն մշակելուն ուղղված հայեցակարգ մշակելու ուղղությամբ, որը կնախատեսի մեկ միասնական փաստաթղթով, մասնավորապես, օրենսգրքի տեսքով, սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտների կարգավորումը: Միևնույն ժամանակ, սնանկության ոլորտը կարգավորող միասնական իրավական ակտը պետք է բավարար երաշխիքներ ստեղծի պարտատերերի իրավունքների պաշտպանության և նրանց խախտված իրավունքների վերականգման, պարտապանների առողջացման հնարավորությունների ապահովման, սնանկության վարույթի կանխատեսելի և համալիր կարգավորման համար, ինչպես նաև ստեղծի բարենպաստ միջավայր և պայմաններ ձեռնարկատիրական գործունեության անխոչընդոտ իրականացման համար, ինչպես Հայաստանում գործող, այնպես էլ օտարերկրյա ձեռնարկատերերի մասնակցությամբ հարաբերությունների զարգացման համար: Ուստի, նախատեսվող հայեցակարգի շրջանակներում անհրաժեշտ է, ի թիվս այլնի, անդրադառնալ՝

1. Հայաստանում սնանկության մոդելի փոփոխությանը՝ առանձնացնելով լուծարման և առողջացման գործընթացները և նախատեսելով առողջացման կամ լուծարման ծրագրերի ներդնում հենց վարույթի սկզբից,

[39] Տե՛ս CEPEJ, Guidelines on electronic court filing (e-filing) and digitalisation of courts, 2021:
[40] Տե՛ս CCJE. 2011. Opinion No.(2011)14 of the CCJE “Justice and information technologies (IT)”:

2. սնանկության վարույթի հնարավոր բոլոր կողմերի և մասնակիցների կարգավիճակի հստակեցմանը,
3. բացի ֆիզիկական անձանցից նաև մասնագիտացված կազմակերպությունների՝ որպես սնանկության կառավարիչ հանդես գալու իրավական հնարավորության նախատեսումը,
4. ֆիզիկական անձանց սնանկության իրավակարգավորումների կատարելագործմանը,
5. սնանկության վարույթի ժամկետների կրճատմանը,
6. կոռուպցիոն ռիսկեր պարունակող բոլոր ներկա կարգավորումների վերանայմանը,
7. սնանկության վարույթում սնանկության կառավարչի կողմից, պարտապանի սեփականության և բիզնեսի կառավարման հարցերի վերանայմանը,
8. սնանկության վարույթում թույլատրելի ծախսերի համակարգի նախատեսմանը,
9. անդրազգային սնանկության վերաբերյալ իրավակարգավորումների նախատեսմանը,
10. առանձին սուբյեկտների համար սնանկության հատուկ ընթացակարգերի նախատեսմանը:

Սնանկության վարույթի վերաբերյալ համակարգային, համապարփակ և լիարժեք օրենսդրություն մշակելուն ուղղված հայեցակարգը մշակելուց և լայն քննարկում անցնելուց հետո անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ մարմինների հետ մշակել սնանկության օրենսգիրք, որը կնախատեսի սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտների սահմանումն ու կարգավորումը, ինչպես նաև հայեցակարգի շրջանակներում ուրվագծված այլ խնդիրները:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արդարադատության արդյունավետության և մատչելիության ապահովման տեսանկյունից շարունակում է արդիական մնալ վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը: Հաշվի առնելով զարգացած տնտեսություն և իրավական մշակույթ ունեցող երկրներում, ինչպես նաև ձեռնարկատերերի շրջանակներում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կիրառման տարածվածությունն ու զարգացման մակարդակը՝ դրանց զարգացումը Հայաստանում կարևոր է նաև ներքին և արտաքին ներդրումների խթանման նպատակով: Մասնավորապես, Հայաստանի ներդրումային գրավչությունը պայմանավորված է նաև առևտրային վեճերի լուծման կանխատեսելիությամբ, որում մեծ դեր ունեն վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները:

Իր հերթին վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը պայմանավորված է դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման, գործերի քննության ժամկետների կրճատման, ինչպես նաև կողմերի համար վեճերի առավել ճկուն և միաժամանակ մատչելի և արդյունավետ եղանակով լուծման մեխանիզմներ նախատեսելու անհրաժեշտությամբ: Ուստի, ներկայումս՝ դատարանների գերծանրաբեռնվածության պայմաններում, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կիրառելիության խթանումն ու ընդլայնումը խիստ անհրաժեշտություն է: Ընդ որում, դատարանների վարույթում գտնվող գործերի մեծամասնությունը կազմում են որոշակի տեսակի գործեր, օրինակ, 2021թ.-ի ընթացքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել են 164,187 գործեր, որից 150,923-ը (91.92%) գումարի բռնագանձման պահանջի մասին: Իր հերթին, նույն ժամանակահատվածում ներկայացվել է 115,555 վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում: Ընդ որում, նշված գործերի և դիմումների դեպքում մեծ թիվ են կազմում ֆինանսական կազմակերպությունների կամ հանրային ծառայություն մատուցող կազմակերպությունների մասնակցությամբ վեճերը (դիմումները), քանի որ բացակայում են այդպիսի վեճերի լուծման այլընտրանքային եղանակների արդյունավետ մեխանիզմները:

Հատկանշական է, որ ներկայումս Հայաստանում գործում են մի քանի արբիտրաժային կենտրոններ, որոնք, սակայն, առավելապես գործում են տեղական մակարդակով: Ընդ որում, այս կենտրոնները քննում են առավելապես գումարի բռնագանձման վերաբերյալ վեճեր, որոնք մեծամասամբ ներկայացվում են ֆինանսական կազմակերպությունների կողմից: Արդյունքում, միայն գործող արբիտրաժային կենտրոնների գործունեության պարագայում լիարժեք չի

ապահովվում վեճերի լուծման այլընտրանքային այս եղանակի զարգացումը Հայաստանում, որոշակի մասնագիտացված վեճերով ներպետական գործերի, ինչպես նաև օտարերկրյա անձանց մասնակցությամբ վեճերի լուծման ներգրավումը Հայաստանում գործող արբիտրաժային կենտրոններ:

Անդրադառնալով հաշտարարությանը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային եղանակի, հարկ է նկատել, որ դրա զարգացումը և ժամանակակից միտումներին համապատասխանեցումը նույնպես կնպաստեն Հայաստանում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացմանը և կիրառման տարածմանը: Մասնավորապես, ներկայումս հաշտարարության ինստիտուտի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական բարեփոխումներ, որոնց միջոցով օրենսդրական լուծում կտրվի պրակտիկայում ծագած մի շարք խնդիրների: Նախ անհրաժեշտ է որոշ ընտանեկան գործերով նախքան դատարան դիմելը սահմանել պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, ինչն իր դրական ազդեցությունը կունենա նաև դատական համակարգի ծանրաբեռնվածության թեթևացման վրա: Հաշտարարության ինստիտուտի բարեփոխման նպատակով անհրաժեշտ են նաև նոր իրավակարգավորումներ՝ կապված առցանց հաշտարարության իրականացման, հաշտարարների նշանակման, փոխկապակցվածության բացահայտման, հաշտարարական գաղտնիքի պահպանման վերաբերյալ: Կարևորվում է նաև նոր իրավակարգավորումների սահմանումը հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության արդյունավետ գործունեության ապահովման նպատակով: Մասնավորապես, անհրաժեշտ է օրենքում հստակ ամրագրել հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության կառավարման մարմինների և նրանց իրավասությունների շրջանակը և խնդիրները: Անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել հաշտարարներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի հիմունքները, վարույթի հարուցման հիմքերն ու առիթները, վարույթի հարուցման ու քննության կարգը և այլ հարցեր: Իր հերթին, օրենսդրական կառուցակարգերի ներդրմանը զուգահեռ, անհրաժեշտ է իրականացնել նաև աջակցող միջոցառումներ՝ օրենսդրական կարգավորումները պատշաճ իրագործելու նպատակով:

Հետևաբար, նշված ոլորտում իրականացվելիք բարեփոխումների շրջանակներում միջազգային լավագույն փորձին, զարգացման համաշխարհային միտումներին և Հայաստանի Հանրապետության դատաիրավական և սոցիալ-տնտեսական առանձնահատկություններին համահունչ՝ համապարփակ անդրադարձ պետք է կատարել վեճերի լուծման այլընտրանքային եղանակներին, մշակել և ներդնել դրանց կենսագործման կայուն մեխանիզմներ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծում

Ինչպես նշվել է, Հայաստանում գործում են մի քանի արբիտրաժային հաստատություններ, որոնք առավելապես գործում են տեղական մակարդակով: Այս առումով, հաշվի առնելով մի շարք բարենպաստ գործոններ, մասնավորապես՝ անդամակցությունը ԵԱՏՄ կառույցին, ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կնքումը, հայկական սփյուռքի ձեռնարկատիրական դերի ակտիվացումը Հայաստանում և այլ հանգամանքները բարենպաստ և հեռանկարային պայմաններ կարող են ստեղծել Հայաստանում նոր տարածաշրջանային և միջազգային կշիռ ունեցող ժամանակակից արբիտրաժային կենտրոնի ստեղծման համար: Ուստի նոր արբիտրաժային կենտրոնը պետք է այնպես նախատեսել, որ այն ի վիճակի լինի ապահովել և՛ միջազգային, և՛ տարածաշրջանային, և՛ տեղական գործերի քննությունը: Հատկանշական է, որ նոր արբիտրաժային հաստատության ստեղծման անհրաժեշտությունը կարևորվում է նաև Հայաստանում իրականացված ոլորտային ուսունասիրությունների արդյունքներով[41]:

Կենտրոնի ստեղծման գործում պետք է հաշվի առնել ինչպես հարաբերականորեն նոր ստեղծված արբիտրաժային կենտրոնների ստեղծման և գործունեության փորձը (Ռուսաստանի արբիտրաժային կենտրոն, Աստանայի և Դուբայի արբիտրաժային կենտրոններ), այնպես էլ ավանդական և միջազգային մեծ հեղինակություն ունեցող կենտրոնների փորձը (Լոնդոնի, Ստոկհոլմի, Ցյուրիխի կենտրոններ): Իր հերթին, նոր արբիտրաժային կենտրոնը պետք է քննի ինչպես ընդհանուր առևտրային բնույթի վեճեր, այնպես էլ փոքր հայցապահանջներով գործեր (օրինակ՝ ֆինանսական կազմակերպությունների և հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնակցությամբ վեճեր)՝ հատուկ վարույթի կարգով, որը հատկապես կնպաստի դատարանների ծանրաբեռնվածության թոթափմանը՝ գումարի բռնագանձման գործերի որոշ մասի քննության համար դառնալով արդյունավետ հարթակ: Իր հերթին, ընդհանուր առևտրային բնույթի վեճերի դեպքում նոր կենտրոնը պետք է արդյունավետ հարթակ լինի հատուկ որոշակի մասնագիտացվածության գործերի քննության համար, ինչպես, օրինակ, մտավոր սեփականության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ներդրումային, կորպորատիվ կամ այլ վեճերն են՝ հաշվի առնելով այս ոլորտների զարգացման ինչպես համաշխարհային, այնպես էլ տեղական միտումներն ու հեռանկարները, որոնց

[41] Տե՛ս «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի «ՀՀ-ում վեճերի այլընտրանքային լուծման ոլորտի վերաբերյալ» հետազոտությունը, էջ 60:

համատեքստում ստեղծվող կենտրոնը կարող է ձգտել դառնալու տարածաշրջանային կառույց:

Նոր արբիտրաժային կենտրոնի հեղինակության և ավելի մեծ թվով գործեր ներգրավելու տեսանկյունից անհրաժեշտ է լինելու դրա հիմնադրման աշխատանքներին և հետագա գործունեությանը ներգրավել ոլորտի անվանի մասնագետների, կազմակերպությունների (այդ թվում արբիտրաժային կենտրոնների), որոնք կներդնեն իրենց փորձը և գիտելիքները, ինչպես նաև կնպաստեն նոր կենտրոնի կայացմանը:

Արդյունքում՝ նման նախաձեռնությունը ոչ միայն մեծ խթան է հանդիսանալու Հայաստանում վեճի լուծման այլընտրանքային եղանակների զարգացմանը, նպաստելու է Հայաստանի ներդրումային միջավայրի բարելավմանը, այլև բարձրացնելու է Հայաստանի վարկանիշը առնվազն տարածաշրջանային մակարդակով:

Արբիտրաժային օրենսդրության կատարելագործում

Չնայած այն հանգամանքին, որ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը, հատկապես 2015թ. կատարված փոփոխություններից հետո, համահունչ է ՅՈՒՆՍԻՏՐԱԼԻ «Միջազգային առևտրային արբիտրաժի» մոդելային օրենքի կարգավորումներին, այնուամենայնիվ, առկա են որոշակի իրավական խնդիրներ, որոնց պետք է անդրադարձ կատարել արբիտրաժի արդյունավետության ապահովման տեսանկյունից: Այս առումով օրենսդրական կարգավորմամբ, ի թիվս այլնի, պետք է կատարելագործել արբիտրաժային վճիռների չեղարկման և կատարման վարույթները, ընդլայնել արբիտրաժի կողմից քննվող գործերի շրջանակը և այլն:

Հաշտարարության օրենսդրության կատարելագործում

Արբիտրաժի ինստիտուտի զարգացմանը զուգահեռ Հայաստանում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կատարելագործման նպատակով անհրաժեշտ է բարեփոխել նաև հաշտարարության ինստիտուտը: Այսպես, անհրաժեշտ է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և պրակտիկայում ծագած խնդիրների վերլուծության հիման վրա վերանայել «Հաշտարարության մասին» օրենքը և, ըստ անհրաժեշտության հարակից օրենսդրությունը: Նշված միջոցառման շրջանակներում անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, այդ թվում՝ տեղեկատվական և հեռահաղորդակցային տարբեր հասանելի տեխնոլոգիաների զուգակցմամբ առցանց

հաշտարարության իրականացման հնարավորությունը: Դատական համակարգի ծանրաբեռնվածության թեթևացման նպատակով և, հիմք ընդունելով նաև լավագույն միջազգային փորձը, նախատեսվում է օրենսդրորեն ամրագրել ընտանեկան որոշ գործերով նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ: Ընդ որում, Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից հրապարակված «Հաշտարարության ոլորտում օրինաստեղծ գործունեության եվրոպական ձեռնարկ»-ում ևս առաջարկվում է նախնական հաշտարարությանը դիմած լինելը որոշակի դեպքերում սահմանել որպես դատարան դիմելու պայման[42]: Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, որ որոշ ընտանեկան գործերով անձը կարող է դիմել դատարան հաշտարարության իրականացումից հետո: Միևնույն ժամանակ հարկ է ամրագրել անհրաժեշտ երաշխիքներ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար: Մասնավորապես նախատեսել որոշ բացառություններ նշված կանոնից, ինչպես նաև օրենսդրական դրույթներ սահմանել՝ կապված հաշտարարության ավարտման կանոնակարգման հետ: Ոլորտի բարեփոխման նպատակով առաջարկվում է նաև իրավակարգավորումներ սահմանել՝ ուղղված հաշտարարական գաղտնիքի պաշտպանության, հաշտարարների ռեեստրի վարման և հաշտարարների նշանակման կամ թեկնածուի ընտրության կարգի բարեփոխմանը: Հաշտարարության ինստիտուտի արդյունավետ գործունեության և կանոնակարգման նպատակով պետք է նաև սահմանել նոր իրավակարգավորումներ՝ կապված հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության մարմինների, նշված մարմինների ձևավորման կարգի և լիազորությունների վերաբերյալ: Հաշտարարության ինստիտուտի նկատմամբ վստահության աճի նպատակով կարևոր է նաև օրենսդրորեն հստակ կարգավորել հաշտարարներին կագապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և առիթները, վարույթի իրականացման կարգը և հետևանքները:

Հաշտարարության ոլորտի բարեփոխումների իրականացման ապահովում

«Հաշտարարության մասին» օրենքում ակնկալվող փոփոխությունների պատշաճ իրացումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում ավելացնելու

[42] European Commission for the Efficiency of Justice (CEPEJ): European Handbook for Mediation Lawmaking, As adopted at the 32th plenary meeting of the CEPEJ Strasbourg, 13 and 14 June 2019, 14 June 2019, տե՛ս https://rm.coe.int/cepej-2019-9-en-handbook/1680951928 հղումով:

Հայաստանում գործող որակավորված հաշտարարների թիվը: Նշվածով պայմանավորված անհրաժեշտ է նաև վերանայել նոր հաշտարարների ներգրավման, ուսուցման, ռեեստրի վարման և ընտրության իրավական և գործնական մեխանիզմները: Իր հերթին, անհրաժեշտ է բավարար չափով կարգավորել հաշտարարների որակավորման և վերապատրաստման ընթացակարգերը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը կարևոր և առաջնային սահմանադրաիրավական մեխանիզմ է անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման համար: Ուստի, դատաիրավական բարեփոխումների նախորդ փուլերում միշտ անդրադարձ է կատարվել փաստաբանական համակարգի բարելավման անհրաժեշտությանը և այդ ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերին՝ ընդգծելով այս ոլորտի կարևորությունը մարդու իրավունքների պատշաճ ապահովման և պաշտպանության տեսանկյունից և դրա շարունակական կատարելագործման և զարգացման անհրաժեշտությունը:

Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է նախատեսել իրավական կառուցակարգեր, որոնք հնարավորինս կերաշխավորեն սահմանադրական մակարդակում ամրագրված փաստաբանության գործունեության սկզբունքները: Այս համատեքստում կարևորվում է փաստաբանության ինստիտուտի՝ փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի զարգացումը՝ փաստաբանության գործունեության ինքնակառավարման սահմանադրական սկզբունքին համապատասխան:

Իր հերթին, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ երաշխավորման համատեքստում հատուկ կարևորություն ունեն կարիքավոր անձանց իրավաբանական օգնությամբ ապահովման մեխանիզմները, որոնցից ամենատարածվածն են պետության կողմից երաշխավորվող անվճար իրավաբանական օգնությունը և հենց փաստաբանների կողմից տրամադրվող կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը:

Փաստաբանության ինստիտուտի և որպես դրա վերջնարդյունք՝ իրավաբանական օգնության իրավունքի զարգացման համատեքստում առանձնակի կարևորության ուղղություններից մեկն էլ փաստաբանների որակավորման ընթացակարգերն են, որոնց պատշաճ ապահովման դեպքում է միայն հնարավոր ապահովել լավ մասնագետների մուտքը փաստաբանական համայնք, որոնք էլ հետագայում ստանձնելու են իրենց վստահորդների իրավունքների պաշտպանությունը: Ուստի, փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացման համատեքստում հարկ է անդրադարձ կատարել ինչպես որակավորման ընթացակարգերին, այնպես էլ փաստաբանական դպրոցում ուսուցման կարգին:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի զարգացում

Փաստաբանության գործունեության ինքնակառավարման սահմանադրական սկզբունքի համատեքստում փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի կատարելագործման տեսանկյունից անհրաժեշտ է վերանայել փաստաբանների պալատի գործող կառուցվածքը: Մասնավորապես, նպատակահարմար է թվում ստեղծել կարգապահական հանձնաժողով, որը մասնագիտացված կերպով և անկախության սկզբունքին համապատասխան կքննի փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները: Իր հերթին, անհրաժեշտ է նախատեսել պալատի մարմինների, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի հաշվետվողականության բարձրացման մեխանիզմներ: Պալատի ներքին կառուցվածքների զարգացմանը կնպաստեն նաև պալատի մարմինների անդամների և պաշտոնատար անձանց գործունեության անհամատեղելիության որոշ կանոնների սահմանումը, օրինակ, նույն անձի միաժամանակ մի քանի մարմնում անդամ լինելու արգելքը կամ պալատի պաշտոնատար անձանց՝ միաժամանակ պալատի մարմինների անդամ լինելու սահմանափակումները: Իր հերթին, պալատի մարմինների անդամների լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերի օրենսդրական մակարդակում ամրագրումը կնպաստի պալատի ներքին գործընթացների և կառուցակարգերի զարգացմանը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտություն կա վերանայել պալատի մարմինների անդամների ընտրության կարգը, քանի որ ներկայումս յուրաքանչյուր ընտրող կարողանում է ընտրել համապատասխան մարմնի անդամների թվի չափով թեկնածուների, ինչի պարագայում մեծ է հավանականությունը, որ չի ապահովվի առանց որոշակի ուղղորդումների պալատի մարմինների կազմի համալրման հնարավորությունը:

Փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի գործունեության արդյունավետության բարձրացման և ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև դրա մարմինների որոշումների, հատկապես, կարգապահական վարույթի շրջանակներում կայացված որոշումների պատշաճ և ժամանակին կատարման կապակցությամբ առաջացող հարաբերությունների իրավական կարգավորման հնարավորությունը: Ուստի, անհրաժեշտ է ուսումնասիրել նաև նման որոշումների՝ հատուկ վարույթի շրջանակներում դատական կարգով բողոքարկման հնարավորության նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով այդ գործընթացների առանձնահատկությունները:

Անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի ընդլայնում

Անձանց իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի տեսանկյունից առանցքային է հանրային պաշտպանության ինստիտուտի դերն ու նշանակությունը: Այս համատեքստում «Փաստաբանության մասին» օրենքում պարբերաբար կատարվել են փոփոխություններ՝ ուղղված հանրային պաշտպանների կողմից անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակի ընդլայնմանը: Այդուհանդերձ, նման շրջանակը պարբերաբար վերանայման կարիք ունի, քանի որ առկա են նաև այլ խմբերի պատկանող անձինք, որոնց նպատակահարմար է ներառել անվճար իրավաբանական օգնության շահառուների ցանկում: Ուստի, անհրաժեշտ է քննարկել այդ շրջանակում ստորև նշված անձանց ներառելու հարցը, մասնավորապես՝

- օտարերկրացիներին՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար,
- այն անձանց, ում վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ,
- տուժողներին, եթե վերջիններս պարտադիր ժամկետային զինծառայող են կամ երեխա:

Հանրային պաշտպանների թվակազմի ավելացում

Հայաստան Հանրապետությունում անվճար իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքն ապահովվում է միայն փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով: Այս համատեքստում հարկ է հաշվի առնել, որ հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը վերջին տարիներին յուրաքանչյուր տարի մեծանում է, ինչի հետևանքով գրասենյակը ներկայումս աշխատում է գերծանրաբեռնված:

Վերոնշյալի լույսի ներքո և հանրային պաշտպանի գրասենյակի գործող հաստիքների պարագայում, ինչպես նաև հաշվի առնելով նոր ընդունված Քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները՝ մոտ ապագայում էապես կարող է վտանգվել քրեական գործերով վարույթ իրականացնող մարմինների՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու առնչությամբ կայացված որոշումների ժամանակին կատարման ապահովումը, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակին դիմող քաղաքացիներին անվճար որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը:

Այսպես, հանրային պաշտպանի գրասենյակը քրեական գործերով 2018թ.-ին վարել է 6688 գործ, 2019թ.-ին՝ 7183 գործ (աճ՝ 7.5 տոկոս), 2020թ.-ին՝ 7361 գործ (աճ՝ 2.5 տոկոս), 2021թ.-ին՝ 10492 գործ (աճ՝ 42.5 տոկոս): Իր հերթին, քաղաքացիական

գործերով 2018թ.-ին գրասենյակը վարել է 7021 գործ, 2019թ.-ին՝ 8608 գործ (աճ՝ 23 տոկոս), 2020թ.-ին՝ 7926 գործ (նվազում՝ 7.9 տոկոս), 2021թ.-ին՝ 8800 գործ (աճ՝ 11 տոկոս):

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտություն է առաջացել ավելացնել հանրային պաշտպանի գրասենյակի հաստիքների թիվը, ինչը կնպաստի անվճար իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի պատշաճ ապահովմանը:

Անհատույց իրավաբանական օգնության (pro bono) տրամադրման կառուցակարգերի զարգացում

Արդարադատության մատչելիության ապահովման նպատակով անհրաժեշտ է զարգացնել անվճար իրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային մեխանիզմները՝ մասնավորապես pro bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգեր ներդնելու միջոցով, ինչն իր հերթին կնպաստի հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության թեթևացմանը: Անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը խրախուսող կարգավորումների նախատեսման անհրաժեշտության մասին նշվել է նաև ՄԱԿ Զարգացման Ծրագրի կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետությունում անհատույց իրավաբանական օգնության համակարգի գնահատում» փաստաթղթում[43]:

Մասնավորապես, անհրաժեշտ է ստեղծել մեխանիզմներ, որոնք կներառեն հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների, փաստաբանական դպրոցի ունկնդիրների, բուհերի ուսանողների, ինչպես նաև փաստաբանական գործունեություն իրականացնող և այլ կազմակերպությունների իրավաբանների, որոնք տարբեր ձևաչափերով կտրամադրեն անհատույց իրավաբանական օգնություն՝ միաժամանակ դրա դիմաց ստանալով որոշակի արտոնություններ, օրինակ, վերապատրաստման դասընթացներից ազատման ձևով: Նման մեխանիզմների շրջանակում կարելի է նախատեսել, որ նշված անձինք գրանցվեն հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող ցուցակներում, որի դեպքում հանրային պաշտպանի գրասենակի ղեկավարը կկարողանա նրանց հանձնել հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող գործերի որոշակի մասը: Նման մեխանիզմի պարագայում հնարավոր կլինի նաև որոշակիորեն համակարգել pro bono օգնության տրամադրումը՝ նպաստելով հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքների իրականացմանը և միաժամանակ հնարավորինս թեթևացնելով վերջինիս ծանրաբեռնվածությունը:

[43] Տե՛ս ՄԱԿ Զարգացման Ծրագրի կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետությունում անհատույց իրավաբանական օգնության համակարգի գնահատում» 6.9-րդ կետ, էջ 41:

Իր հերթին, pro bono իրավաբանական օգնության կառուցակարգերի ներդրումից հետո անհրաժեշտություն է առաջանալու ուսումնասիրել այդ կառուցակարգերի արդյունավետությունը և քայլեր ձեռնարկել դրանց հաջորդական զարգացումն ապահովելու ուղղությամբ՝ նախատեսելով ինչպես խրախուսման նոր կառուցակարգեր, այնպես էլ դրանց ընդլայնման և պատշաճ տրամադրման ապահովմանն ուղղված այլ մեխանիզմներ:

Փաստաբանների որակավորման ընթացակարգերի վերանայում

Գործող օրենսդրությանը համապատասխան՝ փաստաբանական դպրոցի հիմնական առաքելությունը փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և փաստաբանների մասնագիտական վերապատրաստման կազմակերպումն ու անցկացումն է: Ուստի, ներկայումս փաստաբան կարող են դառնալ բացառապես այն անձինք, ովքեր Փաստաբանական դպրոցում անցել են համապատասխան ուսուցում: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ նման պարտադիր ուսուցման պահանջը առավելագույնս հաշվի չի առնում փաստաբանի արտոնագիր ստանալու ցանկություն ունեցող անձանց տարբեր շրջանակների առանձնահատկությունները (կրթություն, մասնագիտական փորձ, անցած ուղի և այլն): Ուստի, հարկ է նախատեսել որակավորման քննություններին մասնակցելու, ինչպես նաև Փաստաբանական դպրոցում ուսուցման ճկուն և տարբերակված համակարգեր: Հատկանշական է, որ այս ուղղությամբ բարեփոխումների անհրաժեշտությունը ընդգծվել է նաև ՄԱԿ Զարգացման Ծրագրի կողմից իրականացված «Հայաստանի Հանարապետությունում փաստաբանների որակավորման համակարգի գնահատում» փաստաթղթում[44]:

Իր հերթին, փաստաբանների որակավորմանը, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստմանը վերաբերող կարգավորումները առավելապես կարգավորվում են փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերով, այնինչ այդ հարաբերությունները որոշակիորեն նպատակահարմար է կարգավորել օրենսդրական մակարդակում, քանի որ փաստաբանությունը հանրային կարևոր ինստիտուտ է, և հանրությունը շահագրգռված է արհեստավարժ փաստաբանական համայնքի առկայությամբ և դրա կայուն զարգացմամբ:

[44] Տե՛ս ՄԱԿ Զարգացման Ծրագրի կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանարապետությունում փաստաբանների որակավորման գնահատումը», էջեր 29-30:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Արդարադատության արդյունավետության կարևորագույն բաղադրիչ և դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման անբաժանելի մաս է նաև հարկադիր կատարման կայուն համակարգի առկայությունը: Հատկանշական է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի ընդունումից ի վեր Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը կրել է բազմաթիվ ինստիտուցիոնալ փոփոխություններ: Չնայած այն հանգամանքին, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2019 թվականի հուլիսի 23-ի թիվ ՀՕ-126-Ն օրենքով կատարվել են բազմաթիվ էական փոփոխություններ, այնուամենայնիվ, հարկադիր կատարման ոլորտի օրենսդրությունը համակարգային վերանայման կարիք ունի:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր մոդելի ներդրում

Գործող իրավակարգավորումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումն ապահովում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, որը գործում է Արդարադատության նախարարության կազմում՝ որպես նախարարությանը ենթակա մարմին:

Ներկայումս հարկադիր կատարողների աշխատանքի վարձատրությունը որևէ կերպ փոխկապակցված չէ նրանց կատարած աշխատանքի ծավալների, արդյունավետության կամ այլ որակական ցուցանիշների հետ, առկա չէ աշխատանքի արդյունավետության բարձրացման և մոտիվացիայի ապահովման բավարար գործիքակազմ:

Ըստ այդմ՝ անհրաժեշտ է իրականացնել ոլորտային ուսումնասիրություններ՝ ուղղված Ծառայության նոր մոդելի, կառուցվածքի և կարգավիճակի փոփոխության հնարավորությանը և արդյունավետությանը, դրա հիման վրա մշակել համապատասխան օրենսդրական փոփոխությունների հայեցակարգ: Արդյունքում իրենց լուծումը կստանան մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ Ծառայության մոդելի վերանայման միջոցով Ծառայության ծանրաբեռնվածությանը և կատարողական գործողությունների ծավալին համապատասխան վարձատրության ապահովումը, արդյունքում՝ առավել արհեստավարժ կադրերի ներգրավումը, անձնակազմի գործունեության և կատարողական գործողությունների արդյունավետության բարձրացումը:

Հարկադիր կատարման ոլորտի օրենսդրության համակարգային վերանայում

Գործող օրենսդրական կարգավորումները նախատեսում են հարկադիր կատարման ենթակա մի շարք ակտեր, սակայն հստակեցված չեն այդ ակտերի հարկադիր կատարման բոլոր առանձնահատկությունները, դրանցից յուրաքանչյուրի հարկադիր կատարման հետ կապված հարաբերությունները առանձին ինստիտուցիոնալ կարգավորման ենթարկված չեն, և ոչ միշտ է, որ դատական ակտերի կատարման վերաբերյալ դրույթները կարող են համապարփակ կարգավորել նաև հարկադիր կատարման ենթակա այլ ակտերի կատարման հետ կապված հարաբերությունները:

Բացի այդ, գործնականում լինում են դեպքեր, երբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը ստանում է կատարողական թերթեր, որոնք տրվել են ճանաչողական հայցերով, կատարում չենթադրող դատական ակտերի կամ այնպիսի ակտերի հիման վրա, որոնց կատարումը գործնականում խնդրահարույց է, օրինակ՝ սահմանել հարկադիր սերվիտուտ, ճանաչել անձի սեփականությունը գույքի նկատմամբ, իրականացնել քանդման աշխատանքներ, հաստատել հաշտության համաձայնություն, որոնց կատարումը պայմանավորված է պահանջատեր կողմի պարտավորության կատարմամբ և դրանց կատարումը գործնականում դառնում է անհնար:

«Կատարողական վարույթի մասին» նոր օրենքի մշակումը միասնական իրավաբանական հասկացությունների կիրառմամբ՝ թույլ կտա ունենալ առավել համապարփակ, համակարգված, պարզ և ընկալելի նպատակներով կարգավորումներ, սահմանել գույքի առանձին տեսակների բռնագանձման և կատարողական առանձին խումբ վարույթների (այդ թվում՝ հայցի ապահովման և այլ միջանկյալ դատական ակտերի հարկադիր կատարման, ոչ դրամական բնույթի առանձին տեսակների կատարողական վարույթների) առանձահատկությունները, ընդլայնել բռնագանձման ենթակա գույքի շրջանակը, կարգավորել կատարողական վարույթի շրջանակում գույքի պահպանության հետ կապված խնդիրները: Դա իր հերթին կնպաստի օրենքի միատեսակ մեկնաբանմանը և դրա հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը, կատարողական վարույթի հետ կապված վեճերի արդարացի լուծմանը:

Անհրաժեշտ է նաև կատարելագործել կատարողական վարույթում էլեկտրոնային ծանուցումների իրականացման իրավական հիմքերը, էլեկտրոնային ծանուցման եղանակները և ընդլայնել ծանուցման էլեկտրոնային գործիքակազմի կիրառությունը, բարձրացնել ոչ դրամական պահանջների հարկադիր կատարման գործընթացի արդյունավետությունը՝ ներդնելով նաև ոչ դրամական պահանջների կատարմանն ուղղված լրացուցիչ միջոցներ:

Կատարողական վարույթի վերաբերյալ համապարփակ իրավակարգավորումների նախատեսումը թույլ կտա նաև հարկադրանքի «փափուկ» միջոցների կիրառման միջոցով, ինչպիսիք են, օրինակ, հարկադիր կատարողի որոշմամբ հետախուզվող

տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության հնարավորության սահմանափակումը, հետախուզվող ֆիզիկական անձանց և շարժական գույքի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը սահմանափակելը և այլն, խթանել հարկադիր կատարման ենթակա ակտերի կամովին կատարումը, բարձրացնել կատարողական վարույթի արդյունավետությունը:

Ուստի, կատարման ենթակա ակտերի տեսակից և բնույթից ելնելով՝ անհրաժեշտ է սահմանել կատարողական վարույթների և կատարողական գործողությունների կատարման համապարփակ իրավակարգավորումներ՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի բոլոր առանձնահատկությունների հաշվառմամբ:

Միաժամանակ, գործող կարգավորումների համաձայն՝ կատարողական գործողությունների կատարման ծախսերը գանձվում են՝ ելնելով բռնագանձվող գումարի կամ գույքի արժեքի չափից: Այնինչ նման կառուցակարգի պայմաններում գերակայում են այնպիսի իրավիճակները, երբ բռնագանձման ենթակա կատարողական ծախսը ակնհայտորեն գերազանցում է հարկադիր կատարողի կատարած գործողությունների ծավալը և բարդությունը, և հակառակը՝ կատարված մեծածավալ աշխատանքի դիմաց վճարվում է ակնհայտորեն նվազ կատարողական ծախս՝ ելնելով բռնագանձվող գումարից:

Ուստի անհրաժեշտ է սահմանել կատարողական ծախսերի հաշվարկման այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան բռնագանձման ենթակա կատարողական ծախսերի չափը որոշել՝ հիմքում դնելով ոչ միայն բռնագանձման ենթակա գումարի չափը, այլ նաև կոնկրետ կատարողական վարույթի շրջանակում կատարված կատարողական գործողությունների կատարման ծավալը և առանձնահատկությունները:

Անհրաժեշտ է վերանայել նաև կատարողական վարույթի կասեցման, ավարտի և կարճման հիմքերի շրջանակը, հստակ սահմանել դրանց իրավական հետևանքները, այդպիսով՝ ապահովելով այդ հիմքերի միասնականությունը և բացառելով հարկադիր կատարողի հայեցողությամբ վարույթը կասեցնելու հնարավորությունը՝ սահմանելով դրանք որպես հարկադիր կատարողի կողմից իրականացվող ընդհանուր լիազորություններ:

Ի լրումն վերոնշյալի, կատարողական վարույթի վերաբերյալ համապարփակ իրավական կարգավորումների և կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքակազմերի կիրառման եղանակների ընդլայման հետ մեկտեղ անհրաժեշտ է ապահովել նաև Հարկադիր կատարումն ապահովող ծառայության վերաբերյալ իրավակարգավորումների համապատասխանեցումը «Կատարողական վարույթի մասին» նոր օրենքի կարգավորումներին, շտկել «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» գործող օրենքի թերություններն ու բացթողումները, հարկադիր կատարողների սոցիալական երաշխիքների ընդլայնումը, աշխատավարձի հաշվարկման

ճկուն մեխանիզմների ներդնումը և հարկադիր կատարողի մասնագիտության հեղինակության բարձրացումը:

Կատարողական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանության և հարկադիր կատարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է նաև սեղմ ժամկետներում կատարողական վարույթի իրականացման ապահովումը: Այս առումով անհրաժեշտ է ներդնել այնպիսի գործիքներ, որոնք կբարձրացնեն կատարողական գործողությունների արդյունավետությունը, կապահովեն առավելագույն սեղմ ժամկետում կատարողական գործողությունների կատարումը և կատարողական վարույթի կողմերի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում

Կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքակազմի կիրառման եղանակների ընդլայնումն ու էլեկտրոնային կատարողական վարույթի ստեղծումն անհնար է իրականացնել առանց Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածության ապահովման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս առկա սերվերային հանգույցները և սարքավորումներն էականորեն դժվարացնում, որոշ դեպքերում՝ անհնարին են դարձնում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ժամանակակից ծրագրերի մշակումը և ներդնումը: Ուստի, անհրաժեշտ է արդիականացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության սերվերային հանգույցը, ստեղծել անհրաժեշտ ենթակառուցվածքներ, անհրաժեշտ տվյալների կենտրոններ (data center), փոխարինել և արդիականացնել բաժանարար կոմուտատորները, ձեռք բերել անխափան սնուցման սարքեր, պահուստային սերվերներ, արխիվացման համար անհրաժեշտ սարքավորումներ:

Բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման և բռնագանձման գործընթացի օպտիմալացում

Անհրաժեշտ է ապահովել կատարողական վարույթի շրջանակում պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման և բռնագանձման գործընթացում առևտրային բանկերի կողմից հաղորդագրություններ ուղարկելու, ստանալու և դրանց համապատասխան ընթացքի իրականացումն առավելագույն ինքնաշխատ եղանակով, կրճատել առևտրային բանկերի կողմից ստացված հաղորդագրություններին պատասխանելու, դրամական միջոցներն արգելադրելու և ապաարգելադրելու ժամկետները, ապահովել պարտապանի բանկային հաշիվներից և ավանդներից բռնագանձված գումարների առավելագույն արագ բաշխումը և կատարողական վարույթի կարճումը:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմի վերապատրաստման և իրազեկման ապահովում

Կատարողական վարույթի մասին համապարփակ իրավակարգավորումների սահմանման, կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքակազմի ընդլայնման, տեխնիկական նոր լուծումների մշակման և տեխնիկական հագեցվածության ապահովման առնչությամբ իրականացվող միջոցառումների արդյունավետությունն ու կենսագործումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմի վերապատրաստում՝ ըստ իրականացված բարեփոխումների ուղղությունների և աշխատակիցների գործառույթներին դրանց առնչության:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՅԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարողական մակագրության ինստիտուտի կիրառման կատարելագործում և ընդլայնում

Հաշվի առնելով նոտարների՝ որպես արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձանց դերը արդարատության իրականացման արդյունավետության և մատչելիության տեսանկյունից, նոտարական համակարգի զարգացումը, ինստիտուտի ամրապնդումը շարունակում են մնալ արդիական:

Նոտարական համակարգի կատարելագործումը նշանակալի ազդեցություն ունի նաև դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու գործում՝ հաշվի առնելով, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների ծանրաբեռնվածությունը մեծապես պայմանավորված է գումարի բռնագանձման գործերի և վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումների մեծ ծավալով, մասնավորապես միայն 2021 թվականի ընթացքում ներկայացվել է 115,555 վճարման կարգադրության դիմում, իսկ քննվող գործերի 90%-ից ավելին կազմել են գումարի բռնագանձման գործերը, որոնց գերակշիռ մեծամասնության կատարման համար հետագայում ներկայացվել է կատարողական մակագրության թերթի տրամադրման դիմում:

Թեև ներկայումս նոտարները ևս կարող են իրենց կողմից վավերացված գործարքների կատարման համար տրամադրել կատարողական մակագրության թերթ, սակայան քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցները նախընտրում են դիմել դատարան, քանի որ գործող մեխանիզմները բավականաչափ արդյունավետ չեն: Ուստի, նոտարի կոմից կատարողական մակագրության թերթի տրամադրման ինստիտուտի կատարելագործման և ընդլայնման նպատակով նախատեսվում է ներդնել նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով կատարողական մակագրության թերթի տրամադրման ինստիտուտը, որը հնարավորություն կտա հնարավորինս կրճատելու գործընթացի տևողությունը, կնպաստի քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կողմից նոտարական կարգով կատարողական թերթ ստանալու պահանջարկի մեծացմանը, ինչն էլ իր հերթին կնվազեցնի դատարանների ծանրաբեռնվածությունը՝ կրճատելով օրինական ուժի մեջ մտած վճարման կարգադրությունների և գումարի բռնագանձման մասին որոշումների կատարումն ապահովելու նպատակով քաղաքացիների կողմից դատարան ներկայացվող կատարողական մակագրության թերթ տրամադրելու մասին դիմումների ծավալը:

Նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերի վերանայում

Նոտարիատի ինստիտուտի կատարելագործումը պայմանավորված է նաև նոտարին կարգապահական պատախանատվության ենթարկելու վարույթների արդյունավետությամբ, որոնք միաժամանակ պետք է երաշխավորեն նոտարների իրավունքների պատշաճ պաշտպանությունը, իսկ ընդունված որոշումները պետք է լինեն պատճառաբանված և հիմնավորված: Չնայած ներկայումս գործում են նոտարի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթ հարուցելու մեխանիզմներ, սակայն դրանք բանավականաչափ արդյունավետ չեն և լիովին չեն ապահովում նոտարի իրավունքների պաշտպանությունը:

Այսպիսով նոտարիատի ոլորտում իրականացվելիք բարեփոխումների շրջանակում պետք է ներդնել նոտարի կողմից կատարողական մակագրության թերթի տրամադրման ինստիտուտի ընլայնման մեխանիզմներ, սահմանել նոտարին կարագապահական պատասխանատվության ենթարկելու վարույթների հիմնավորվածությունը և արդյունավետությունը երաշխավորող լրացուցիչ լծակներ:

Նոտարական համակարգի շարունակական զարգացման ապահովման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերի արդյունավետությունը, միաժամանակ ապահովելով նոտարի՝ որպես արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձի հեղինակության պաշտապանությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումները բացի դատական կարգով բողոքարկելու առկա մեխանիզմներից ներդնել նաև դրանք վարչական վերադասության կարգով (Արդարադատության նախարարության շրջանակներում) բողոքարկելու արդյունավետ կառուցակարգ, սահմանելու կարգապահական վարույթի արդյունքում ընդունվող որոշումների պատճառաբանվածության և հիմնավորվածության պահանջ՝ սահամանելով դրանց բովանդակությունը, ինչպես նաև մշակելու որոշումների օրինակելի ձևեր՝ բացառելով դրանց հնարավոր տարընկալումները երրորդ անձանց կողմից:

Նոտարների պատասխանատվության ապահովագրության համակարգի կատարեելագործում

Նոտարների պատասխանատվության ապահովագրության ինստիտուտը նոտարների հետ իրավահարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության կարևոր նախադրյալներից և եղանակներից մեկն է: Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը իր ՝ 2016 թվականի մայիսի 10-ի թիվ ՍԴՈ-1271 գործով կայացրած որոշմամբ, անդրադառնալով նոտարի կողմից պատասխանատվության ռիսկի ապահովագրման հարցին, արձանագրել է, որ նման ընթացակարգը երաշխավորում է Հայաստանի Հանրապետության անունից գործելիս՝

պատվիրակված պետաիշխանական գործառույթներ իրականացնելիս, նոտարի մեղքով պատճառված վնասի իրավաչափ հատուցումը: Այս համատեքստում նոտարական գործունեության կատարելագործման, ինչպես նաև նրանց հետ հարաբերություններում անձանց իրավունքների առավել պաշտպանվածության տեսանկյունից անհրաժեշտ է վերանայել և բարեփոխել նոտարների պատասխանատվության ապահովագրման կարգավորումները, ինչպես նաև սահմանել նոտարների պատասխանատվության ստանդարտներ:

Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կանոնակարգող միասնական իրավական ակտի մշակում

Ներկայումս գործող «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքն ընդունվել է 2013 թվականի մայիսի 2-ին և, կապված պետական ու հասարակական կյանքում տեղի ունեցած և շարունակվող բարեփոխումների հետ՝ այն կարիք ունի էական փոփոխությունների: Այս համատեքստում անհրաժեշտ է օրենքը համադրելի դարձնել այժմյան զարգացումներին և գործող օրենսդրությանը:

«Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքի ընդունումից հետո դրանում կատարվել են շուրջ տասնհինգ փոփոխություններ կամ լրացումներ:

Արդյունքում, սակայն, 2013 թվականին ընդունված «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքն իր տրամաբանությամբ, կառուցվածքով, ներուժով և տարատեսակ հատվածական փոփոխություններով ի վիճակի չէ ապահովելու Արդարադատության ակադեմիայի նպատակների և դրանցից բխող գործառույթների պատշաճ իրականացումը:

Ընդ որում, հայեցակարգային փոփոխություններ կատարելը և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքի և հարակից օրենքների իրավակարգավորումների միջև առկա խզումը վերացնելը հնարավոր է միասնական իրավական ակտի ընդունմամբ, քանզի հայեցակարգային մեկ դրույթի փոփոխությունը հանգեցնելու է բազմաթիվ նորմերի և ամբողջ օրենքի տրամաբանության փոփոխության:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն ռազմավարության շրջանակում կարևորվում է Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կարգավորող միասնական իրավական ակտի ընդունումը:

«Փորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագծի մշակում

Դատափորձագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է մշակել «Փորձագիտական գործունեության մասին» օրենքի

(այսուհետ՝ Օրենք) նախագիծ: Հայաստանի Հանրապետությունում դեռևս առկա չէ փորձագիտական գործունեության մասին օրենք, որպիսի պայմաններում փորձաքննությունների իրականացման հետ կապված իրավահարաբերությունները մինչ օրս ամբողջական և համապարփակ կարգավորում չեն ստացել: Հարկ է նշել, որ դատավարական ընթացակարգերի շրջանակներում նշանակվող փորձաքննությունների դեպքերում խնդիրներն ինչ-որ չափով կարգավորվում են քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածների դրույթներով, իսկ դատավարական ընթացակարգերից դուրս իրականացվող փորձաքննություններն, ըստ էության, որևէ օրենսդրական կարգավորման առարկա չեն հանդիսանում: Օրենքի բացակայության պայմաններում կանոնակարգված չեն փորձաքննության ոլորտի մի շարք հարաբերություններ, այդ թվում՝ փորձագիտական հիմնարկի կամ հաստատության բնորոշումները (չափորոշիչները), փորձագետին, փորձաքննության մեթոդաբանությանը ներկայացվող չափորոշիչները, փորձագետի պատասխանատվության հիմքերը, տեսակները, փորձագետների ատեստավորման հիմնահարցը և այլն:

Հարկ է նշել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական գործունեությունն իրականացվում է հիմնական տեսակներով՝ փորձագիտական հիմնարկների՝ համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպությունների, Ոստիկանության փորձաքրեագիտական վարչության, դատաբժշկական և դատահոգեբուժական տեսակներով, նաև Առողջապահության նախարարության ենթակայությամբ գործող համապատասխանաբար՝ պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագետների և դատահոգեբուժական փորձագիտական ամբուլատոր և ստացիոնար հանձնաժողովների կողմից, իսկ որոշ տեսակներով՝ նաև մասնավոր իրավաբանական անձանց կամ յուրաքանչյուր առանձին դեպքով վարույթն իրականացնող մարմնի կողմից դատավարական ընթացակարգերի համաձայն՝ փորձագետ ճանաչվող մասնագետների կողմից:

Ողջ վերոշարադրյալով բացահայտվում է նախատեսվող իրավակարգավորման շահառուների լայն շրջանակը, ինչը ևս մեկ ազդակ է սույն ռազմավարության շրջանակներում դատափորձագիտական գործունեության մասին օրենքի ընդունման նախատեսման համար:

ԲԱԺԻՆ II: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ռազմավարության և դրա Գործողությունների ծրագրի լիարժեք և արդյունավետ իրագործման ապահովման նպատակով նախատեսվում է երկու մեխանիզմ՝ Մշտադիտարկման խորհուրդ, որը գործելու է որպես ընդհանուր մշտադիտարկման մեխանիզմ, և Հասարակական կազմակերպությունների աշխատանքային խումբ՝ որպես հասարակական վերահսկողության ապահովման մեխանիզմ:

1. Ընդհանուր ոլորտային մշտադիտարկման և վերահսկողության նպատակով կազմավորվում է 15 անդամից բաղկացած Մշտադիտարկման խորհուրդ (Խորհուրդ):

Խորհուրդը Ռազմավարության և Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի համակարգմանը, մշտադիտարկմանը և գնահատմանն աջակցելու գործառույթներ իրականացնող մշտապես գործող բազմաշահառու խորհրդատվական մարմին է:

Խորհրդի կազմի մեջ մտնում են՝

- Վարչապետը կամ նրա հանձնարարությամբ՝ Վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչը,
- Արդարադատության նախարարը,
- Արդարադատության նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալը,
- Գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ Գլխավոր դատախազի տեղակալը (համաձայնությամբ),
- Բարձրագույն դատական խորհրդի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամը (համաձայնությամբ),
- Դատական դեպարտամենտի ղեկավարը (համաձայնությամբ),
- Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը (համաձայնությամբ),
- Քննչական կոմիտեի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը (համաձայնությամբ),
- Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչը,
- Ազգային Ժողովի պետական և իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ մշտական հանձնաժողովի անդամը (համաձայնությամբ),
- Արդարադատության ակադեմիայի ռեկտորը (համաձայնությամբ),
- Փաստաբանների պալատի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Փաստաբանների պալատի ներկայացուցիչը (համաձայնությամբ),
- Հայաստանի Հանրապետությունում առավել մեծ թվով ուսանողներ ունեցող երկու իրավագիտության ֆակուլտետները ներկայացնող մեկական ներկայացուցիչ՝ պրոֆեսորադասախոսական կազմից (համաձայնությամբ),

- Մարդու իրավունքների պաշտպանը կամ նրա հանձնարարությամբ՝ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ (համաձայնությամբ),
- Քաղաքացիական հասարակության կազմակերպություններից 2 ներկայացուցիչներ (համաձայնությամբ):

Խորհրդի անհատական կազմի ձևավորումն ապահովվում է Արդարադատության նախարարության միջոցով, իսկ անհատական կազմը հաստատվում է Վարչապետի կողմից: Խորհրդի կազմում ընդգրկվելու համար թեկնածությունները ներկայացվում են այն հասարակական կազմակերպությունների կողմից, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությանը կամ դատական համակարգի հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն: Թեկնածուների կենսագրությունները և նրանց ներկայացրած հասարակական կազմակերպությունների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները հրապարակվում են Արդարադատության նախարարության կայքում: Խորհրդի կազմում ընդգրկվելու համար դիմում ներկայացնելու կարգը դիմում ներկայացնելու վերջնաժամկետից առնվազն 30 օր առաջ հրապարակվում է Արդարադատության նախարարության կայքում:

Խորհուրդը համարվում է ձևավորված իր անդամների կեսից ավելին նշանակվելու դեպքում: Խորհուրդն իր գործառույթներն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստն իրավազոր է Խորհրդի անդամների կեսից ավելին ներկա լինելու դեպքում, իսկ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան սահմանված չէ Խորհրդի աշխատակարգով:

Խորհուրդն ընդունում է իր աշխատակարգը՝ կազմավորվելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Խորհրդի անդամներին վարչական, փորձագիտական և տեխնիկական աջակցության տրամադրման նպատակով Արդարադատության նախարարության կազմում ստեղծվում է Խորհրդի քարտուղարություն:

Խորհուրդը կարող է ձևավորել աշխատանքային խմբեր, որոնք պատասխանատու կլինեն Ռազմավարությամբ սահմանված առանձին ռազմավարական նպատակներից բխող գործողությունների իրականացման համակարգման համար:

Ռազմավարության և Գործողությունների ծրագրի իրականացման համակարգումը և մշտադիտարկումն ապահովելու նպատակով պատասխանատու մարմինները յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Խորհրդի քարտուղարություն են ներկայացնում Գործողությունների ծրագրով իրենց վերապահված գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: Խորհրդի քարտուղարությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունների փաթեթը ներկայացնում է Խորհրդին ու տեղադրում Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջի հատուկ բաժնում:

Ռազմավարության և Գործողությունների ծրագրի ընթացքի մշտադիտարկման և գնահատման գործառույթներն իրականացնում է Արդարադատության նախարարությունը՝ դրա համար պատասխանատու նշանակված կառուցվածքային ստորաբաժանման միջոցով, որը յուրաքանչյուր տարվա վերջում մշտադիտարկման ու գնահատման վերաբերյալ զեկույցը ներկայացնում է Խորհրդին: Մշտադիտարկման և գնահատման մեթոդոլոգիական ուղեցույցը հաստատում է Խորհուրդը:

Խորհուրդը Ռազմավարության և Գործողությունների ծրագրի իրականացման արդյունավետության զեկույցների քննարկման արդյունքում կարող է.

- Կառավարությանը ներկայացնել առաջարկություններ՝ Ռազմավարությունում և Գործողությունների ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ,
- առանձին գործողությունների կատարման համար պատասխանատու մարմիններին ներկայացնել խորհրդատվական կարծիքներ՝ առանձին գործողությունների կատարման ընթացքի, աստիճանի և կատարմանն ուղղված հնարավոր անհրաժեշտ քայլերի վերաբերյալ:

Հավանության արժանանալու դեպքում առաջարկվող փոփոխությունների իրականացման աշխատանքները համակարգվում է Արդարադատության նախարարության կողմից՝ որպես դատաիրավական ոլորտում կառավարության քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմին:

Ռազմավարության ու Գործողությունների ծրագրերի ազդեցության գնահատման նպատակով Խորհուրդը միջնաժամկետ ու երկարաժամկետ փուլերում տարբեր թիրախային խմբերում կարող է նախաձեռնել հանրային կարծիքի հարցումներ, որոնց անցկացման հիման վրա չափվում է բարեփոխումների ազդեցությունը հասարակության վրա: Միջնաժամկետ փուլում իրականացված հարցումների արդյունքների գնահատման ու վերլուծության արդյունքում Խորհուրդը կարող է նախաձեռնել Ռազմավարության ու Գործողությունների ծրագրերի, ինչպես նաև իրականացման մեթոդների ու մեխանիզմների վերանայման ու փոփոխությունների նոր շրջափուլ:

Գործընթացի նկատմամբ առավել թափանցիկություն ապահովելու նպատակով Ռազմավարությունը և Գործողությունների ծրագիրը տեղադրվում են Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջի հատուկ բաժնում: Կայքէջում տեղադրվում են նաև կիսամյակային հաշվետվությունները և տարեկան զեկույցները, որոնցում մի քանի բաղադրիչներից կազմված գործողությունների դեպքում մատնանշվում են յուրաքանչյուր բաղադրիչի կապակցությամբ կատարված միջոցառումները:

Խորհուրդը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կառավարությանն է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն, իսկ տարեվերջին՝ տարեկան ամփոփ զեկույց:

Խորհուրդն օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կարող է նախաձեռնել Ռազմավարության առանձին նպատակների իրագործման համար պատասխանատու մարմինների հաշվետվողականության լրացուցիչ գործընթացներ:

2. Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների կատարման արդյունավետության և հասարակական վերահսկողության ապահովման նպատակով ոլորտային հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ Արդարադատության նախարարի հրամանով ստեղծվում է նաև աշխատանքային խումբ:

Աշխատանքային խմբի հիմնական նպատակներն են.

- քննարկել և վերլուծել Ռազմավարությանն առնչվող բոլոր ընթացիկ ծրագրերը, գործողությունները և քայլերը, Ռազմավարությունից բխող առանձին նախագծերի կամ միջոցառումների իրականացման ընթացքը,
- անհրաժեշտության դեպքում ներկայացնել գրավոր առաջարկություններ՝ ուղղված Ռազմավարության և դրանից բխող միջոցառումների արդյունավետ իրականացման ապահովմանը,
- ամփոփել Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի կատարման արդյունքները և արդյունավետությունը:

Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան երեք ամիսը մեկ անգամ:

Աշխատանքային խմբի գործունեության արդյունքներն ամփոփվում են գրավոր հաշվետվության կազմման միջոցով, որը ներկայացվում է Արդարադատության նախարարին՝ յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ:

ԲԱԺԻՆ III: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ[45]

Ընդամենը՝ Ռազմավարության համար					20,717,400,000
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026
	1,631,900,000	13,056,500,000	2,164,000,000	2,246,000,000	1,619,000,000
Ըստ ֆինանսավորման աղբյուրի					
Միայն պետական բյուջե					2,054,500,000
Միայն վարկային և դրամաշնորհային միջոցներ					4,805,400,000
Պետական բյուջե կամ վարկային և դրամաշնորհային միջոցներ					13,857,500,000

Ընդամենը՝ Նպատակ 1. «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ						**5,225,800,000**
Ըստ տարիների՝	**2022**	**2023**	**2024**	**2025**	**2026**	**Ընդամենը**
	375,800,000	**2,930,000,000**	**670,000,000**	**750,000,000**	**500,000,000**	
Գործողություն 1		500,000,000				**500,000,000**
Գործողություն 2		500,000,000				**500,000,000**
Գործողություն 3		500,000,000				**500,000,000**
Գործողություն 4			500,000,000			**500,000,000**
Գործողություն 5			20,000,000			**20,000,000**
Գործողություն 6						**-**
Գործողություն 7		50,000,000				**50,000,000**
Գործողություն 8			100,000,000			**100,000,000**
Գործողություն 9				500,000,000		**500,000,000**
Գործողություն 10		20,000,000				**20,000,000**
Գործողություն 11	300,000,000					**300,000,000**

[45] Թվերը ներկայացված են ՀՀ դրամով:

Գործողություն 12	45,800,000					**45,800,000**
Գործողություն 13	30,000,000					**30,000,000**
Գործողություն 14		150,000,000				**150,000,000**
Գործողություն 15		10,000,000				**10,000,000**
Գործողություն 16		1,000,000,000				**1,000,000,000**
Գործողություն 17		200,000,000				**200,000,000**
Գործողություն 18				250,000,000		**250,000,000**
Գործողություն 19					500,000,000	**500,000,000**
Գործողություն 20			30,000,000			**30,000,000**
Գործողություն 21			20,000,000			**20,000,000**

Ընդամենը՝ Նպատակ 2. ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ՝ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՄԲ						255,000,000
Ըստ տարիների՝	**2022**	**2023**	**2024**	**2025**	**2026**	**Ընդամենը**
	-	**85,000,000**	**85,000,000**	**85,000,000**	**-**	
Գործողություն 1						**-**
Գործողություն 2		85,000,000	85,000,000	85,000,000		**255,000,000**

Ընդամենը՝ Նպատակ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ						**100,500,000**
Ըստ տարիների՝	**2022**	**2023**	**2024**	**2025**	**2026**	**Ընդամենը**
	67,000,000	**33,500,000**	**-**	**-**	**-**	
Գործողություն 1	67,000,000	33,500,000				**100,500,000**
Գործողություն 2						**-**
Գործողություն 3						**-**
Գործողություն 4						**-**

Ընդամենը՝ Նպատակ 4. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ						9,513,000,000
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
	141,500,000	8,226,500,000	311,000,000	323,000,000	511,000,000	
Գործողություն 1				12,000,000		12,000,000
Գործողություն 2		28,000,000	28,000,000	28,000,000	28,000,000	112,000,000
Գործողություն 3					200,000,000	200,000,000
Գործողություն 4	141,500,000	283,000,000	283,000,000	283,000,000	283,000,000	1,273,500,000
Գործողություն 5		7,900,000,000				7,900,000,000
Գործողություն 6						-
Գործողություն 7		15,500,000				15,500,000
Գործողություն 8						-
Գործողություն 9						-
Գործողություն 10						-

Ընդամենը՝ Նպատակ 5. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ						864,100,000
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
	438,600,000	380,500,000	15,000,000	-	30,000,000	
Գործողություն 1		360,500,000				360,500,000
Գործողություն 2	220,000,000					220,000,000
Գործողություն 3	197,000,000					197,000,000
Գործողություն 4	21,600,000					21,600,000
Գործողություն 5					30,000,000	30,000,000
Գործողություն 6		20,000,000				20,000,000
Գործողություն 7			15,000,000			15,000,000
Գործողություն 8						-
Գործողություն 9						-
Գործողություն 10						-

Ընդամենը՝ Նպատակ 6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ						-
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
	-	-	-	-	-	
Գործողություն 1						-
Գործողություն 2						-
Գործողություն 3						-
Գործողություն 4						-
Գործողություն 5						-
Գործողություն 6						-
Գործողություն 7						-

Ընդամենը՝ Նպատակ 7. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ						12,000,000
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
	-	12,000,000	-	-	-	
Գործողություն 1						-
Գործողություն 2						-
Գործողություն 3						-
Գործողություն 4		12,000,000				12,000,000

Ընդամենը՝ Նպատակ 8. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ						227,000,000
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
	-	227,000,000	-	-	-	
Գործողություն 1		227,000,000				227,000,000
Գործողություն 2						-
Գործողություն 3						-

Ընդամենը՝ Նպատակ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ						1,519,000,000
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
	9,000,000	512,000,000	496,000,000	496,000,000	6,000,000	
Գործողություն 1						-
Գործողություն 2						-
Գործողություն 3						-
Գործողություն 4	6,000,000	6,000,000				12,000,000
Գործողություն 5						-
Գործողություն 6		490,000,000	490,000,000	490,000,000		1,470,000,000
Գործողություն 7						-
Գործողություն 8	3,000,000	6,000,000	6,000,000	6,000,000	6,000,000	27,000,000
Գործողություն 9		10,000,000				10,000,000

Ընդամենը՝ Նպատակ 10. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ						292,000,000
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
	-	68,000,000	68,000,000	88,000,000	68,000,000	
Գործողություն 1						-
Գործողություն 2						-
Գործողություն 3		68,000,000	68,000,000	68,000,000	68,000,000	272,000,000
Գործողություն 4						-
Գործողություն 5						-
Գործողություն 6						-
Գործողություն 7				20,000,000		20,000,000

Ընդամենը՝ Նպատակ 11. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ						2,709,000,000
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
	600,000,000	582,000,000	519,000,000	504,000,000	504,000,000	
Գործողություն 1						-
Գործողություն 2		504,000,000	504,000,000	504,000,000	504,000,000	2,016,000,000
Գործողություն 3		24,000,000				24,000,000
Գործողություն 4	600,000,000					600,000,000
Գործողություն 5		24,000,000				24,000,000
Գործողություն 6		30,000,000				30,000,000
Գործողություն 7			15,000,000			15,000,000

Ընդամենը՝ Նպատակ 12. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՅԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ						-
Ըստ տարիների՝	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
	-	-	-	-	-	
Գործողություն 1						-
Գործողություն 2						-
Գործողություն 3						-
Գործողություն 4						-
Գործողություն 5						-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ